

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԲԱՆԱՀԻՄՈՒԹԻՒՆԻՑ

Ե. ԱԱԱԹԵԱՆԻ

ԲԼՅՈՒԼ ԿՈՒՇ.

Վախտով՝ ժամանակով թագաւորմ կլնի, ուր իրեյք լաճ՝
Մէկի անուն Միբ-Թագղին. մէկին՝ Միբ-Զէյղին. էն մէկէլի
անուն Միբզա-Մահմատ:

Թագաւոր կանչեց ուր իրեյք լաճերաց, ասաց. Մեր քեա-
դայք ճուր չկայ, ինչին անենյք որ բախչէմ դնենյք:

Թագաւոր ժողվեց ուր միլլաթ, ժողվառեց զըմէն, ասաց՝
ինչ խնարքմ տը գտնէք, որ մեր քեաղայք ճուր խանենյք:

Վաղին ասաց. «Թագաւոր, ապրած կէնաս. մեզնէ ինչ կը
կեայ որ մենյք ճուր խանենյք, պէտքի որ ճուր խանող կեանգեան
գտնեն» որ ճուր խանեն:

Մարդ օրօխկեցին, խելքով մարդկէր կանչեցին, խոր փո-
րել տուին, ճուր խանեցին: Էտա ճրի տոջն թագաւոր մէյ խաս
պազ խոռ շինել, ծէրմ արևելք, մէկ արևմուտք, իրեյք կաթ բա-
դան քեաշեց պիւլոր. գարդեախմ իթօղ արևելք, մէկ արևմուտք,
էրկու գարգեախի վրեն էլ գարգեաւան (պահապան) իտի, մէկ
դանէն տը մտնէն՝ մէկից ըլնէն տիւս:

Ճամրախմ էլ պախչի միջից կընէր տիւս:

Պախչին մաս ճոշացաւ, հըմէն չեյշիտ (տեսակ) եէմիշ պըռ-
նեց, գորսւս թագաւոր էկաւ դռնապաներաց ասաց. Էսօվ դընա
(այսուհետե) ինչ մարդ որ գեա իմ պախչից կըմտնի կընցնի,
խառցուցէք, ասէք, էսա պախչին ի՞նչ պակասութեն կայ. էկեյք
ձի ասէյք:

Կնոնյք էլ գորիս առաւտուն պաշեցին էկօղից, էրթացօղից
կը խառցնէն. կասին գեալո էսա պախչին ի՞նչ կա պակաս:

Որն ինչ արևելքից կըմտնէր ներս, արևելքի դռնապան կը
խառցուցէք. ի՞նչ կա պակաս: Որն էլ արևմուտքից կըմտնէր ներս,
արևմտի դռնապան կըխառցուցէք, ի՞նչ կայ պակաս:

Որն իրե կնաց՝ մարդ պանմ չասաց:

Մնաց մէկ ժամանակմ, օրմ օրերի, ջուխտմ դավրէշ էկան
արևելքի դռնէն ներս մտան, ընկան մէջ պախչին, կանգեալով,

Փռալով, թէ երկու օր, թէ իրեյք օր մէջ պախչին զօռով ֆռացին, կնացին արևելքի դարգինից էլան տիւս:

Արևմտի դռնապան ասաց. Եյ դաւրիչներ, տիւք էսա պախչի մէջ շատ կան էկաք. ըսկի մարդ ձե պէս կան չէր իկեյ, դէ ասէյք գեալօ էսա պախչի մէջ թնչ կայ պակաս:

Ասաց. Զատ չկայ պակաս, ինչ աը ըլնի պակաս:

Ասաց. Հալպաթ պանմ կայ պակաս:

Ոլմա, էն մէկն առաց. թնչ կայ պակաս, էսա պախչին մէկ բլրուկէ-դաննկ (սոխակի ձայն) հազար բլրուկ, հազար ձէնովի ի պակաս, որ հմէն օր կանչի, որ հըմէն ծառ, հըմէն թուփ, ծաղիկ, հմէն սհաթին մէկ գեռն (գոյն) դառնայ. ասին՝ թողին գնացին:

Դարգաւան մէնակ խառցուց, ասաց. Դաւրիչներ, տիւք հիւստ (որտեղից) էք:

Ասին. Մենյք Զինմաշինու քեաղքէյն ենք:

Դարգաւան էր, թէ օրմ թէ երկու օր, թէ տարիմ՝ մնաց չը մնաց թագաւորուն չասաց:

Օրմ օրերաց էլաւ թագաւոր ասաց. Զանըմ, չիս չիւմ էսօր, էսա պախչին մէկմ չիլե, որ անուն զրե, կանչեց ուր առջնի մարդ, օրօխկեց դարգեավանչիք կանչեց իպե:

Դօրին ասաց. Դարգեավանչիք, էսասկընէմ (այսքան) օր ես ձե զըիրեմ վըր էսա դռներաց, տիւք թնչի պանմ չէք ասե:

Արևմտի դարգեավանչին ասաց. Ոլա, օրմ էրկու դաւրէշ մտան արևելեան դարգիսից, շատ կան էկան, էկան աը ըլնէն տիւս, խառցուցի ասի. Եյ դաւրիչներ, մարդ ձե պէս էսա իյզու մէջ կան չըր իկե, դէ ասէյք խենք, ինչ պակսութեն կայ էսա պախչին: Դաշ (առաջ) ասին պան պակաս չի. գօրուս էն մէկն ասաց, Ոլա պանմ պակասի—բլրուկէ դանկ հազարն ի պակաս. ասին ու թօղին գնացին:

Թագաւորն ասաց. Տօ, ապա թնչի տիւ չէկար ձիկ ասէք. եան էն դաւրիչներ ձի խամար աը գտնես, եան քեռ խողիյն կառնեմ:

Դոնապան ասաց. Ալա թագաւորն ապրած կենաս, հալա ես ձը տեղից աը կնտնեմ: Խնոնք Զինմաշինու թագաւորու երկրից էն:

Ասաց. Զէ, եան աը էրթաս կնտնես, եան տիւ ջալատ ես:

Էն էլ ասաց. Թագաւոր, ապրած կենաս, ձի քեառասուն օր ողդա (ժամանակ) տու. կնացի, կնտա, պիրի՝ պիրի. ըըպիրի՝ իմ վիզ կտրի: Դարգեավանչին էր, առաւտուն էլաւ, էրկու խաց իտի ուր չանթիկ (պարկ), էլաւ եա ալլահ, քշեց, թէ օրմ, թէ էրկու, կնաց Զինմաշինու երկիր էլաւ տիւս էստեխ, էստեխ, սալխով (հարցնելով) կնաց էն դաւրէշներ կնտաւ:

Ասաց. Դեալո, դաւրէշ էն ֆլան (այսինչ) ժամանակ տիւք էկայք մեր թագաւորու պախչից էլայք տիւս, ևս ձե խառցուցի, ասի ինչ պակսութեն կայ էսս պախչին. տիւք ասիք, բլրու դանկ հազար (հազարաւոր ձայն սորուկի). Մկայ թագաւոր կասի, ևս էն դաւրիշներ տը պիրես, ևան չէ քիոյ վիզ կը զանեմ:

Դաւրիշներ ասին. Ոլա զանի չը զանի, չիւմ մեր թագաւորուց իղին (հրաման) չառնես, մենյք չընք իզեայ, Դարգեավանչին էլ ասաց. Ասածու սիրուն, ևս շիվար, փուկարա, կարիպ, ևս ինչն աը էրթամ Զինմաշնու թագաւորու մօտ, ասեմ՝ իմ թագաւոր կը կանչի քեռ գարվիշներաց. աը ասի՝ որ քեռ թագաւոր կը կանչէր, չըր կանայ թուղթմ օրօխկի գեէր:

Մարդն էլ դիրմ՝ էլ ասաց. էլ փարա չանի, ևս ափրմ էլ աը էլնեմ էրթամ մօ իմ թագաւոր, թէ իմ վիզ զանի չըգանի, աը ասեմ թագաւոր ապրած կէնաս, ձի թուղթմ տու, ևս էրթամ զաւրիշներ պիրեմ:

Էլաւ կնաց մօտ ուր թագաւոր, թամանդէմ էրաւ կայնաւ. Թագաւոր ասաց. պիրմի՛: Դարգեավանչին ասաց. Ոլա, թագաւոր, ապրած կէնաս. ոլա հալ հէյքաթ, ևս կնացի կնտա. ալա դաւրիշներ ասին, չիւմ մեր թագաւորուց իղին չառնես, մենյք չինյք իզեաւ: Ես էլ ասի. Ասառաւծ, ևս շիվար, աղքեատ, ինչին աը էրթամ թագաւորուն ասեմ, ևս կըխնդրեմ, որ տիւ ձի թուղթմ տաս, ևս էրթամ առնեմ գեամ:

Թագաւորն էլ թուղթ իտու գարգեավանչուն. գարգեավանչին թուղթ առեց, քեց կնաց Զինմաշինու երկիր, էլաւ տիւս. Թուղթ տարաւ իտու թագաւորու ձեռ կայնաւ: Թագաւոր կարդաց, գյրեր էր. ևս շատ կըխնդրեմ որ Փիլան էրկու դաւրիշներ դրկես գայ. ձի զործ կայ: Թագաւոր էլաւ, դաւրիշներ կանչեց իտի խետ գարգեավանչուն, օրօխկեց էկան:

Էկան խասան էլմ էլ մօտ թագաւոր: Թագաւոր ասաց. դարգեավանչի, էկմյք, ասաց խա, ասաց. էյ դաւրիշներ, Փիլան օր տիւք էկէրէյք իմ պաղից ընցերէյք, ասիրէյք պան կայ պակաս էսս պախչին. ինչն ի պակաս, ասէյք:

Ասին. Թագաւոր, ապրած կէնաս. ոլա զատ չկայ պակաս. մեակ պլազու կուշն ի պակաս, որ նա կանչի քեռ պաղի մէջ:

Էյ, ասաց, դաւրիշներ, բլրու կուշ մը երկիրն ի Դաւրիշներ ասին. ոլա մենյք էլ չենյք զիսու մը երկիրն ի, դեռը ի: Էն մէկ դերգիշն ասաց. ոլա ձի պապիկմ կայ խալիւոր. Էնի ուր չեւլութնի վախտ զնացեր ի էն երկիր, ևս կը պատմէր կասէր բլրում կայ, ինչ կը կանչի, էն երկրի ծառ, թուփ, քեար, խոր, ահաթէ մշաթ մէկ գեռն կառնի. թէ էն սալլի տայ:

Թագաւորն ասաց. Դարդեանչի, էլ տիւ կնա, քեյ խամար պան չմնաց. էլաւ կնաց:

Թագաւոր թուղթմ գրեց իտու դաւրիշներաց, էլմ էլ օրօխնկեց մօտ Զինմալինու թագաւոր ասաց. Ես քեյնէ կըինողեմ, որ տիւ էսա դաւրիշներ օրօխնկեցիր, ես ինոնց մօտէն պանմ չը խասկըցայ, ինոնց պապիկն օրօխնի որ սալըխ տայ, ինչնք բլբուլ կուշին մը տեղն ի:

Թագաւորն էր օրօխնկեց էն պապիկն իպե, իտի խետ դավդիշներաց, զապթիէքնէրաց (ոստիկան) օրօխնկեց, կնաց մօտ էն թագաւոր:

Թագաւորն ասաց. Դէ, պապիկ, ասա խենյք, բլբուլ կուշին մը տեղն ի:

Ասաց. Թագաւոր, ապրած կենաս, ձիկ մը խառցուցե, ես ցնդիրեմ, իմ խելք իմ գյլօխ չի, թէ որ իմ խելք պիրես իմ գյլօխ, խօրոտմ շախես, պալքի սալըխմ տամ քեյ:

Թագաւոր իպե օր երեք գեառ թային արաց. երեք օր կէրաւ, էլաւ մէկ տարեկան ջահէւ:

Եյ, ասաց. Թագաւոր, բլբուլ կուշ գեօ Փռանգստանայ երկիր. ինոնք բիթուն թեաւոր են, կը թռնին, ինոնց երկիր, սկում կրակ ի, տաք ի որ էնտեղի քեար, խող զըմէն գեործելու (ածուխի) պէս սև ի: Թագաւոր, ասաց, ինոնց երկրի ճնճղուկ չեանց գօմէշմ ի. ինոնք էլ քեառառուն օր կը քյնեն, քեառառուն օր կը մնան ակախտ Խոնց դարդի վէրէն ջանավար կայ դարդեվանչի, ինոնց քեաղքի չորս պիւկոր եօթը պադան կայ. յառաջի դարդեանչին աղւէսն ի, աղւէս. որ աշխրի կենդանիներաց զըմէնի շոազն ի: Մարդ պիտի, կայիմ իմաստուն մարդ պիտի, որ խէծնի էրթա քեաղքիյ դարդի առջև իինի, ուր ուրմ (տէդ) զանի գեյտին, էրթա մօտ աղւէս, քեանի որ ջախտ կայ, լանգէյմ զցի վեր աղվըսու քեամկին, որ աղւէս ակխաւ, խէծնի ուր ձին փախնի: Որ Փռաննկցիք ակխան՝ ինոր կը խեղղեն, որ չէ աղւէս չակխաւ, խէծնի ձին քյշի մէջ քեաղքիին:

Աֆանդըմ, քշի էրթա ինոր իտաս պախէն, տիսնա հըմէն կողմ, պաղ պաղ ջրեր, վըր մարմար քեարերաց կը զըղղըղայ. բլբուլ կուշ կը երգի, հըմէն ծառ, հմէն թուփ մէկ մէկ գեոն կը փոխի. Առնի ըլբուլ, խէծնի ուր ձին, փախի:

Աֆանդըմ, դաւրիշն էր էլաւ կնաց ուր երկիր, մենյք գեանք վըր թագաւուրուն: Թագաւոր կանչեց ուր ահալին (ժողովուրդ) ուր սադրազամ, ուր վազիր վագէրան, ասաց. Եյ, ապա ինչին ուր էնիր, որ մնաք էլ էսա բլբուլ կուշ պիրենյք, վմէ ուր էրթա էն երկրից առնի, գեա:

Մէկն ասաց. թօ, վազիր հա, մէկն ասաց. թօ սաղբաղամ հա, մէկն ասաց. թօ ահալին հա. վըր հասըլի (վերջապէս) կը զրուցէն:

Վազիրն ասաց. թագաւար, քեյ պանմ ասեմ, ալա տիւ տը ասես. էն ուր խամար կասի. խալիսը էրթա, քեյ խամար կը զանի, զարկւի, բլրուլ կուշ պիրի, հա, պիտի որ քեռ լաճեր էրթան,

Թօրուուն կանչեց ուր լաճեր իպե, ասաց. պիտի էրթայք ֆունդա երկիր, բլրուլ կուշին առնէյք գէյք, որ գնեմ մեր խաս պախչէն, կանչի, հըմէն ծառ, ծաղիկ մէկ մէկ գեռն դառնայ:

—Շատ աղէկ, ասին, կէրթանյք:

Առաւտուն էլան խէծան ձեանք. շատ քիչ կնացին, քշեցին խասան ճամփախմ վէրէն, տէսան որ պապալըդմ (ծերունիմ) նստե, խող կը քեյրի, կը պլաւի.

Ե՛, ասաց, պապալըդ, ի՞նչ ես նստե ստա (այստեղ):

Ե՛յ ասաց. նստիրեմ ճամբախ շանց կտամ:

Ե՛յ, ասաց. դէ տամ:

Ասաց. ինչ էսա մէկ ճամբախն ի, կը տանի ուռուսա երկիր, էն կէրթան կը գեան. էսա մէկ Զինմաշինու երկիր, էն հաթպաթի կը գեան, էսա մէկ վով որ էրթա, էլ չը դառնայ:

Միրդա Մահմատ կասի. Զոչ ախպէր, տիւ հար կնա էնա ճամբախ, որ կը դառնան, տիւ տղա կնդես տէր ես: Ինչ տիւ ես՝ կնա էնա ճամբախ ինչ հաթպաթի, տիւ էլ պալքի շոտ գեաս ես էլ կէրթամ էսա ճամբով, ինչ կէրթան չըն դառնայ, թօ ես ձեզնից պակաս ընեմ:

Էլան մէկ մէկու կաց պարև արին, հիրեսներ պազեցին, էն պապիէն էլ կաց պարև արին, քշիցին կնացին: Թօ էրթան ինոյնք, մենյք դառնանյք վէր ջոչ աղպօր:

Զոչ ախպէրն էր կնաց խասաւ ուռուսա քեաղայք, տեսաւ գեօմիլաթ ժողուեր ի, կասի. Տօ էսա ի՞նչ բաս ի (ինչ պատճառով). ես աը էրթամ խեմ. կիրիշկայ կէրթայ, կը տեսնայ որ ինոնց թագաւոր մեռեր ի, դօվլաթ կուշին կը թալեն, որ վեր զլիսուն ինի, էն անեն թագաւոր:

Դէլ էսա թագաւուրու լաճ չէր կնացե էտա մլթի մօտ, խետ դօվլաթ կուշին չըն թալե, էկաւ թառաւ վէր ինոր զյլիսուն: Էլան լաճուն ափիցին ասին. Տօ խայ, տիւ բալա իր, էկար, մեր խաւը կը թառի վըր քեռ զյլիսուն:

Տօ կասի. խօ ես զօսօվա չեմ ասի էկէյք թուշիք վէր իմ զյլիսուն. ի՞նչի ձի կը տփէյք:

Էլմ էլ թալին, էլմ էլ էկաւ, թռաւ վէր ինոր զյլիսուն: Պըռնեցին լաճ տարան մտուցին տուն: Էլմ էլ դօվլաթ կուշին թռաւ:

կնաց վէր ինոր զյլխուն: Ասին. ջանըմ, պիրէյք էսա մարդ անենք
մե թագաւոր, Բնբին արին թագաւոր, իսէրն էլ մտէն ընկաւ,
բլբուլ կուշն էլ:

Դօրիս ժամանակմ մեաց էտա տեղ. ըսկում քեօր բէդօվլաթ
էր, որ թագաւորի մալ միւլք հըմէն կէրաւ, փճացուց, էլաւ ա-
նօթի ծարաւ, ձեռքիր իտի ծոց, չիւր հէվարին քեաղթիյ փօղըն-
թեր (փողոցներ) կան էկաւ: Օրմ զանդիյն (հարուստ) մարդմ ա-
սաց. Էյ մարդ, տիւ ի՞նչ մարդ ես. ասաց. Էյ, ես շիվար եմ. ա-
սաց. Տղա, տիւ չըս կանայ գեա իմ տան խօտաղ էլնի:

Ասաց. Պալէ, ոլա կուգեամ: Դէ ասա ինչ տամ քեյ տարե-
կան: Ոլա ասաց. տիւ տարին տուր էրկու չափ ցորեն, էրկու շուղ-
էրկու կուր խալաւ:

Թէ էն մեայ էն տեղ մընչ ուր հախին (վարձքին):

Մենյք էրթանյք մօտ միջնեկ ախպէր:

Միջնեկ լաճն էր կնաց Զինմաշնու երկիր, ի զար զարկուաւ,
ուր ձին կէրաւ, ուր մալ-թամալ կէրաւ: Թագաւորական խալվը-
ներ կէրաւ. էլաւ էնտեղ խօպան (պարապորդ):

Մենյք էրթանյք վէր Միրզա-Մահմատին:

Միրզա-Մահմատն էր, շատ քիչ Աստուած գիյտի, քշեց,
կնաց խասաւ մէ երկիրմ, իրիշկաց ինոր խոզ, քեար, հըմէն քեա-
րեր, տէսաւ մէկ քեօշկ սարէմ էլմէլ կարմիր, խաս պախչէն առջն:

Ասաց. Ոլա հա ես տը էրթամ էսա պախչէն իմ խացն ուտեմ,
իմ ձին էլ քիչն արածայ, նոր ընեմ էրթամ:

Միրզա-Մահմատն էր նստաւ վըր առաջ կուլաթին (աղբիւրի)
ուր խաց կէրաւ, ջուր խմաւ, նստաւ չիւմ հիրիկուն, գէվու խա-
նում իրիշկաց փէնջարից, տէսաւ խողածինմ նստե դա:

Ասաց. Կարաւաշին (ծառային). Առ խաց տու թօ ուտի, պալքի
անօթի ի, որ կասաւ (նպատակ) արե էսա երկիրն իկե: Կարաւաշն
էլաւ քեասէմ գլաւ, խաց առեց, կնաց:

Ասաց. Խողածին, օձն ուր պորտով, խաւը ուր թեով մեր
երկիր չի գեա, տիւ ինչն ես իկե: Էլի խաց կե կնաւ, քեանի էն
անխողիյն չիկե, քեռ ջոչ պըրտուն քեռ ձախ ականչ կը թողնի:

—Էյ քեանի որ էտակնայ ի, ես նա քեռ խաց կուտեմ, նա
քեռ կերակուր. ես կնստեմ ստա:

Խալայեղն (աղախին) էկաւ ասաց. Ոլա հալ կուն սկընայ
կասի: Էյ, կասի, ինոր մեղք ինոր վիզ:

Մնաց չիւմ իրիկուն. իրիկուն կարմիր դէվ նէճրից (որսից)
էկաւ, քարդի ծառմ զրած վըր թեվին. քեասուն վէրի, քեասուն
գէյլու ջանդակ կախն հըմէն ճղից, դրի վէր թեվին էկաւ:

Խասաւ տուր պըռապոց-պըռոթոց իդի ինե.

Ասաց. Կնիկ, էսա ինչ խողածին ի. Եյ ասաց. մարդ չես օգորկե մօտ:

Ռլա ասաց. Խաց օրօխկեցի, ասի էլի կնա, քեանի դէվ չիկե, Ասաց որ էտակնայ ի պիտի շատէր, որ ասիր ես էլ չըմ էրթա:

Դէվ ասաց. Եյ իմ առաւտգան կահվա ալթին էլաւ:

Առաւտուն դէվն էլաւ խես Միրզա-Մահմադին կորի, չիւմ կէսորին զարկին զարկւան. կէս օրին Միրզա-Մահմատ անուն Աստծուն արաց, դէվուն իթալ զեյտին, ականջներ կտրեց, քշեց էլաւ քեօչկ սարէն:

Դէվու կնիկն էր, ինչ իրիշկաց Միրզա-Մահմադին՝ դէվու կնկայ խօնջան եօթն տեղով կտրաւ:

Ասաց. Ա՛խ քեռ խոգուն մեռնիմ, էն անխոգուն ինչին արիր:

—Ասաց. Կուրպան արի քեռ էտա ճաւպալաք (խաժակն) աշ-քերաց:

Վայ մեռնեմ ես քոյ բաժին, արի տեղ իսկեմ պառկենյք: Տեղ իթալ պառկան:

Դէվ Միրզա-Մահմատ չէր մտե տեղ, դէվու կնիկ չըլտւաւ մտաւ կշափ խետ: Միրզա-Մահմատն էր քեաշեց թուր իտի մէջ էրկուու:

—Ոյ, ասաց. մա տիւ ձի չը խաւնար:

—Զէ ասաց. ես Աստծու ստեղծածին անուն չեմ դնե, ալա ձի անդ (խոստութիւն) կա, չիւմ չէրթամ կատարեն, չըմ անե էտա պան:

—Եյ ասաց. ապա քեռ անդ լինչ ի:

—Ասաց. ես ուր էրթամ բլրիւ կուշին պիրեմ:

—Վայ ասաց՝ քեռ օրօխկողի աշքերը քեօսանայ, ու քեյ չօրօխկէր Չինմաշինու աշխար:

Առաւտուն էր, Միրզա-Մահմատ էլաւ ուր ձին քշեց, կնաց մէ երկերմ էլ, էլաւ տիւս: Տիսաւ որ էն երկրի հըմէն քեար, խող սև ին: Թշեց կնաց վըր Սև դէվու քեօչկ սարին: Տէսաւ Սև քեօչկ սարէմ էր, որ չուտես չիմես ինե իրիշկաս: Ասաց՝ էրթամ մէ ջուրմ խմեմ, հաց ուտեմ, իմ ձին էլ որհաթի, նոր էլնեմ էրթամ:

Սև դէվու կնիկն էր փէնջարից իրիշկաց ասաց ուր խալայ-եղին. էլի խենյք էսա ինչ խողածին ի, որ օձն ուր պորտով, խաւքն ուր թեռվ էսա քեաֆրի խող ուս չի արէ. Էսա կա չկա անօթի ի: Էլի խաց տար թող ուտի, քեանի էն անխոգին (դէվ) չիկերի:

Կարավաշն էր թէփսիմ թէ խաց թէ կեր իլից, առեց տարաւ Միրզա-Մահմատին ասաց. Ի սէր Աստծու, իմ խաթուն կասի թող

ուր խացն ուստի էլնի էրթա, քեանի որ իրիկուն Սև դէվ չիկե, ինոր ճոչ պըտում, ինոր պստիկ ականջ կը թորկի:

—Եյ ասաց՝ Հասկընայ չըր ասի, որ ասիր՝ խօ ես էլ իմ տեղէն հիբար չըմ առնի, խեմ ինչ կանի թօ անի:

Դէվն էր, ափանդըմա սէօյլէյիմ, (պարոնիս ասեմ) իրիկուն էկաւ, Սև դէվն էր բարդի ծառ վլր թիվին հըմէն ճղից մէյ մէկ վէրու ոչխար կախեր էր՝ խետ աշքն ինկաւ Միրզա-Մահմատ ասաց՝ կնինկ էս ինչ խողածին ի իմ առաջ կուլաթնի վրէն. ասաց՝ թօ մնա չիւմ առաւտուն ձի կանգալթի (նախաճաշ) կանեմ:

Առաւտուն որ էլաւ, էլան վեր, կնացին էկան, զմրկին զարկվան, տարան դէն պէրին դէն, չիւմ իրիկուն դէտէ եալլան եա խոտէ (Աստուած) զօրով Միրզա-Մահմատ դէվուն ի զարկ դէյտին, վիզ կտրեց, ակընջներ կտրեց, էթալ ուր ջոպ, քշեց էլաւ քեօչկ սարէն:

Դէվու կնիկ գեօ իրիշկաց, տեսաւ խօրօտ ջնէլմներս մտաւ Դէվու կնկա խօնջան վաթսուն տէղով կտրաւ. այ ասաց՝ կանաչ կտրիչ ջնէլ, դէվ ինչխ էլաւ:

Ասաց՝ դէվ կուրպան արեր իմ էտա քեռ թուխ թուխ աշքերաց: Աֆանդըմ, էտա տեղ կէրան, խման կանվէն, չիւմ իրիկուն արին ուրախութեն, դէվու կնիկ տեղ էթալ (անկողին ձգեց), Միրզա-Մահմատ մտաւ տեղով Խէտ Միրզա-Մահմատ պառկաւ, դէվու կնիկ չըլտվաւ մտաւ կուշտ: Որ մտաւ կուշտ, Միրզա-Մահմատ թուր քաշեց իտի մէջ էրկուս: Ասաց՝ Միրզա-Մահմատ, չըլնի որ տիւ ձի չըխաւնար, որ թուր դրից մըջ ձի մըջ քէյ: Զէ ասաց՝ ոլա էն ստեղծած ինչ Աստուած ստեղծե, ես քէյ անուն չիմ դնե—մլա մէջ ձի ահտ կայ, չիւմ էտա ահտ չը կատարեմ՝ չըլնի: Դէվու կնիկն ասաց՝ էտա ինչ ահտ ի: Ասաց՝ իմ ահտ բլրուկ կուշն ի, որ կնամ կնդընեմ: Ասաց՝ քեռ օրօնկողի աշքեր քեօնայ, բլրուկ կուշ գեօ Փռնզա երկիրն ի: Ինոր ճնճղկներ չանձ գեօմէշմ ջոջ են. տիւ ինչխ աը էրթաս էն երկիր քէյ աը վառեն. ափսոս որ քէ պէս մարդ կինի էն տեղ:

Ափանդըմ, Միրզա-Մահմատն էր առաւտուն էլաւ, խէծաւ ուր ձին, շատ կնաց քէյչ կնաց, Աստուած կիտի, խասաւ Միւտակ դէվու խող էլաւ տիւս: Տէսաւ քեար, խող բիթուն սիւտակ էր. իրիշկաց սիւտակ քեօշկ ու սարէմ, տէսաւ առեր էրկինք բաղ բաղչէն յառջեն Ասաց՝ աը էրթամ լուրմ խմեմ, իմ ձին էլ ոընաթի նոր էլնեմ էրթամ: Միրզա-Մահմատն էր ուր խաց կէրաւ, ճուր խմաւ նստաւ Միւտակ դէվու կնիկ իրիշկաց փէնջարից տէսաւ մարդմ գեօ նստե վըր ուր առաջ կուլաթին (աղքիւրի ական), ասաց ուր խալաեղին. Կնա տես, էսա ինչ խողածին ի. կա չկա էն

ուր ճամբախ մոլլեր ի. իկե ընդեյ էսա քեաֆրի խող, որ էկաւ խում խում տը ուտի ինոր:

Կարտաւշն էր էլաւ քիչմ խաց, կեր առաւ կնաց, իտու ինոր ասաց. Աստած քեռ տուն չաւերի. տիւ ինչի՞ էկար էսա քեաֆրի տիւռ. որ մկա էկաւ, վով կիտի ինչ կը խանի քեռ գըյլօխ. շուտ խաց կե, էլի կնա քեանի որ չիկե:

Դորու կարտազ կնաց ասաց. Ոլլա չըթա, կասի էդսկնա չասէր, որ ասիր, խարիր քեռ դէվու պէս ընի, չըմ էրթա:

—Ե՞յ ասաց՝ թօ կէնսա:

Իրիկուն էր Միւտակ դէվ էկաւ. էրկինյը գետինյը սիւտակ կտրաւ, բարդի ծառմ զրէ վէր թեւին, իրիյք խարիր վաթսուն խինդ վէրի ոչխար կախեր էր ինոնց ճղներաց. տէսաւ, ասաց. Կնիկ, էդա ինչ խողածին ի իմ առաջ կոլաթի վրէն. խաց մաց տվեր ես, որ ինոր մեղք իմ վիզ չինի, չիւմ առաւտուն ընեմ անմէ ձի քենապմուլ:

Ասաց. Խա:

Եյ ասաց՝ թօ մեա չիւմ առաւտուն:

Դէվ քյնաւ, առաւտուն վեր էլաւ, մտաւ խաս բազէն. էլան խէծան ձիեր, վէր կանաչ խոտերաց, կնացին էկան, ըսկում կնացին էկան, որ խոտ, ծաղիկ ոտ ին առեր ինոնց ձիերաց ոտերաց տակ չիւմ կէսօրին. կէսօրին Միրզա-Մահմատ ասաց դէվուն. Խէրիք ի, մեր ձիանք մեղք են. իջի ձեռնով գիւլաշ թալենք (գօտեմարտենք):

Իջան, խասան յիրար, Միրզա-Մահմատ անուն Աստծուն արաց, դէվուն տփեց գեյտին. վիզ կարեց, ականշներ էթալ ջող. քշեց էլաւ Միւտակ քիշոչկ սարէն:

Դէվու կնիկ իրիշկաց՝ տէսաւ խօրօս ջէկլմ էկաւ, որ չուտես չխմես, ինոր բօյին իրիշկաւ Ասաց. դէվն ինչին արիր:

Ասաց. Դէվ կուրպան արի քէո էտա սիւտակ աչքերաց:

Աֆանդըմ, էտա տեղ նստան, կէրան խման չիւմ իրիկուն. Իրիկուն անզ իթաւ, Միրզա-Մահմատ պառկաւ որ քյնէր, դէվու կնիկն էլ չըլաւաւ. մտաւ տեղ: Միրզա-Մահմատն էր թուր քեաշեց իտի մէջ էրկուս. Կնիկ ասաց. Տիւ ձի չխաւնմը:

Ասաց. Զէ, էն որ Աստած ստեղծեր ի, ես անուն չըմ դնի, ուլա ահա կա մըջ իմ սրտին, չիւմ էն ահա չկատարեմ. խմէ խողածինի ծոց չըմ մտնեմ:

Ասաց՝ ինչ ի քեռ մէս:

Ասաց. Իմ ահա բլբուլ կուշն ի աը պիրեմ դնեմ իմ խօր խաս պազէն, որ կանչի՞ ծառ, թուփ կանաչի:

—Ո՞յ ասաց՝ քեռ օրօխկօղի աչքեր քեօնէր. որ կնացիր էլ

չես դառնա. բլրու կուշ գեօ Փռանգի երկիրն է. եան կուգեմա՞ եան չիւմ խասնես դա կը մեռնես:

Առաւտուն էր, Միրզա-Մահմատ էլաւ որ էրթէր. կնիկ չի թօդ. կն ռամտար էր, կը խասկընէր. ասաց. Տղա, մէ էրթա, ի- նոնք քեառուն օր կըբյնին, նոր կըլնեն վեր. ինոնք նոր հերէկ էլած վեր. քեառուն օր ուշ մնաս ըստեղ, նոր էրթաս:

Քեառուն օր Միրզա-Մահմատ մնաց էտա տեղ. քեառ- սուն օր որ թմմաւ, կնիկ ասաց. Դէ էլի կնաւ, էլաւ, խէժաւ ձին. շատ կնաց, քիչ կնաց, Ասուած կիտի, խասաւ Փռանգի երկիր:

Ճամբախ կէրթէր՝ վէրի ոչխարմ էլաւ, փախաւ ուր յառջէն. Միրզա-Մահմատ ասաց՝ ոլլա չիւմ ես էսա վէրին չըպոնեմ, չըմ էրթա: Լարեց կնաց խասաւ Մպահանն թագաւուրու երկիր, ին- գեաւ մէջ ջանմավարներաց. ջանմավարներ (կենդանիք) ժողվան ի- նոր պիւլոր. պանեցին, տարան ուրենց թագաւուրու մօտ, ասին. Թագաւոր, էսա ինչ պան ի մենք պանեցինք:

—է՛յ ասաց թագաւոր, իտոնք էլ հիսան են, կապրին մե պէս:

Միրզա-Մահմատ սկուն կծկաւ, տէսաւ որ ջանմավարներ չորս կողմ պանած, կայնած են:

է՛յ ասաց թագաւոր. Միրզա-Մազմատ. մի վախենա, արի մօտ ձի. ասա՝ գէ, խէր ըլի խողածին. քեռ անուն ինչ ի:

Ասաց. Միրզա-Մահմատ ի իմ անուն

Դէ ասա՝ տիւ ինչի էկար ինգեար ստա:

—Ասաց. Տը էրթէ բլրու կուշին պերէ. ինկա խաչալի յիսեւ,

Ասաց՝ գէ կաց էս տեղ:

Է՛յ, խօրօս տիւ մասի, որ ինոնք Փռանգու թագաւուրու խնամիքն ինւ, էլաւ նամակ օրօխկեց ասաց. ոլլա հալ կոէն, սկսա, էկած զըխ բլրու կուշին, ինչ կանէյք արէյք, իշար կացէյք: Մարդ օրօխկեց, Միրզա-Մահմատ իտի խետքեր օրօխկեց էն- տեղ ինչ վէրի ոչխար լարեր էր:

Ֆունդտէք էկան Միրզա-Մահմատի յառջն պանեցին: Դէվու կնիկ ռամ իթալ, տէսաւ. Միրզա-Մահմատ գեօ գեախնի որ պըռ- նեն, էլաւ մարդ օրօխկեց, Միրզա-Մահմատ առեց իպէ ուր մօտ, պախաց չիւմ իրէյք տարի որ Փռանգուէք ինոնց յոյս, ապաւէն կտրեցին Միրզա-Մահմէտից:

Դէվու կնիկն առաց. Դէ գօրիս էլի, կնաւ, ինոնց քյնելու օրն ի, ոլլա չըվախենաս, ինոնց ճնճղուկներ ճամբիսի էնկող-էնկող քըլ- ներ են, եէրթաս գարգիսի դռան վրէն պառկերի աղէս գէրգեան (դռնապան). մէյ խատ լմնգէյմ (աքացի) կըզանես աղւսու փորի

վրէն, որ ակիսաւ, էն հայ կը տա, տիւ փախի, թէ չէ կը վառն, որ չակիսաւ, տիւ քշի, կնա քեաղաւր:

Միրզա-Մահմատն էր, քշեց կնաց էն երկիր, աղորթ որ տէսաւ, ճամբրխի էն կող էն կող ճնճղուկներ քյներ ին մէյ մէյ գեօմշի չափ. խասաւ դարգխի դռւն, տէսաւ աղէւս քյնէր էր, քեանի որ ջախտ կէր, լանդէյմ իղար վըր աղէւսու փորին, վըժոց ընկան ինեւ. աղէւս չակիսաւ. մէ դիր ասաց՝ հայ ջան չեն ակիսե, քշեց զնաց քեաղայք. մտաւ խառ բաղչէն, առեց ըլբուլ կուշ, էլաւ վըր դռան. Եյ ասաց՝ ևս ինչին էրթամ. առանց պանմ խասկնալու. վաղ կնացի տուն, դիվնի մէջ ձիկ խառցուցին ասին՝ ինչ չկէր, պատմեն ինոնց, շըն ասե որ կնաց ըլբուլ կուշին գեօղցաւ, իպի էլաւ ըլբուլ կուշին տարաւ իսի ուր տեղ, ինգեաւ մէջ քեաղբիյն կան էկաւ (շրջապայեց). Թշեց կնաց մէ քհօշկմ տէսաւ:

Կնաց տէսաւ թագաւորու աղջիկ գեօ քյներ ի, ոսկէ շամդաններ զբեր ևն ոտքերաց տակ ու զյլխու վիրեւ:

Իրիշկաց փառչըմ էլ գեօ զրած դա, ոսկէ ինձնոր զարկած ի պէրան. սիգտակ չմաւրէմ (թաշկինակ) քաշչած վըր հիրիսին, լիւս տես պատեր, սկում խօրօս ի, հօդի պատեր կանաչ կարմրով նիշշւած որ գունիսագա սկուն պան չկայ:

Միրզա-Մահմատն էր ինչ արաց. իսկե արծթէ շամտաններ, ինչ ոտքերաց տակն էր, իսի զյլխուն, ինչ զյլխուն էր, իսի ոտքերաց: Զուր խմաւ. կըծմ իղար ինձնոր. աղչկայ հիրես ինպաց, պագեց. ինոր պոկներաց տեղ սիվացաւ. մյ ասաց՝ խողէ (երանի թէ) ևս ըսկընա չանէ, աղջիկ պէսուս արի, ևտ քեաշեց, էլաւ տիւս. քշեց, կնաց մէկ էլ հօդէն, տէսաւ թագաւոր քյներ ի ուր վաղիրի խետ, մյ ասաց՝ ամօթ ի թագաւորու կնիկ ստեղն ի, արաց որ՝ աը զառնէր, կճկենց ընկեաւ. հառիյք (առաստաղ), զանցաւ, տէսաւ որ, վիշափն կիշնէր տակ, հա հատէր որ թագաւորուն ուտէր. համան խասաւ ուր խանչալն իղար, պվոնեց (միսեց) վըր ան. էթօզ էլաւ կնաց, ըլբուլն ասեց կնաց:

Շատ քիյչ Աստած դիյտի, իրե կնաց Սիվտակ գէվի կնկայ մօտ. կէրան, խման չիւմ իրիկուն, իրիկուն տեղ էթալ, պառկան:

Աֆանըմ, խարիր տարւան խին պամպակ էր քյզեց, էտատիւցէն էլաւ առեց Սիվտակ դէվու կնիկ, կնաց մօտ կարմիր գէվու խոզ: Թէ ամիսմ, թէ էրկու, մնաց մօտ կարմիր դէվու կնիկ. էլաւ ինոր տուն, տեղ, մալ մուլք հըմէն իպաց (բարձաւ.) քշեց կնաց մօտ Սև դէվու կնիկ. էլաւ էն էլ իպաց, կնաստ ինոր խօր խոլին արաց էկաւ կնաց, կնաց մօտ էն Պապիկ, ասաց. Բարե քե, Պապիկ:

Պապիկ ասաց. Օ՞յ պարով, խէրով, կանաչ կտրիճ ջնէլ, տիւ պարով էկար, չիւմ էսօր վով որ կնացե էն ճամբխներ, էլ ետ չիկե, ետ չը դառցեր ի, տիւ ի՞նչին տառցար էկար:

—Պապիկ, ասաց տղէն, գեալո քեյ պանմ խառցուցեմ, էն լաճեր որ էն օր խետ ձիկ էկան ստեղ, կնացին, էլ ետ դառցմծ են:

—Զէ, ասաց Պապիկ, որ տիւ կնացիր, էլ ինոնյք ետ չեն էկած:

—Ե՞յ, էդա չէլաւ. ես մէնակ էրթամ, իմ խէր տասի, ապա մէր են քեռ ախպրներ, ի՞նչ ջուզապ տամ:

—Ասաց. Պապիկ, տիւ կանաս էսա տաւրներ կուես (կառավարես) վեր իրար չում հա էրթամ էն մարդեր առնեմ գեմմ:

—Խա, ասաց Պապիկ, հըմէն առաւտուն կըթօնիմ արօտ, երիկուն էլ կըժողվեմ:

Մէյ դիր Միրզա-Մահմատ խէծաւ ձին, ուր բար (երես) իտու դըխ ջոչ ախպէր, կնաց երկրներ ֆռաց, խարցնելով, կնաց մէյ խատ քեաղայք, տէսաւ մարզմ գեօ կույի (աղբի) կողով շլկե. տըյքտէյքեալով կը տանէր:

Էն ինոր ճանչցաւ, ասաց. Եյ շիւար խօտաղ, քեռ հախն ի՞նչ ի:

Ասաց. Փառք Աստծու, թոլ ի. տարին մէկ չափ ցորեն, մէկ չափ շուղ, մէկ չափ գեարի, իրեյթ կտոր խալաւ ի:

—Ե՞յ, ասաց, որ ես քեյ տարին խինյդ խարիթ ոսկի տամ, ձիմ առնեմ քեյ, թվանք (հրացան) առնեմ քեյ, ուր գեաս մօտ ձի եմ պազրգյնի (վաճառական) խամար էլնես նոպատար (պահնառդ),

—Խա, ասաց, կըգեամ. համան կօղովն իթաւ, իթօղ էնտեղ, էլաւ կնաց, տարաւ սէրսուկիմ համամլամիշ (բաղանիսում լուտանալ) արաց. սէրսուկի խալաւ խապիւց, ձիմ առեց, խետ ուր տիւպոր քշեց, կատ արաց Զինմաշինու երկիր կնաց:

Կնաց էն երկիր, էլաւ տիււ, տէսաւ խօտադմ էլ զօռպա խամալիկմ (սափոր) շկկեր էր գըյդըքեալէն կըտանէր:

Ասաց. Պարև քեյ, խօտաղ, տիւ էլ չը՞ս իդեա մօտ ձիկ խօտաղ, տիւ էլ չըս թգեա ինոր պէս քեյ խալաւ, ձի առնեմ, թվանյք տամ, գեաս իմ տաւարներաց պահպանութեն անես:

Խօտադն էր ասաց. Խա, ես ինոր տիրու խէրն անիծեմ, խամալիկ տփեց գեյտին. ինոր խետ քշեցին կնացին, խասան մօտ պապիկ:

Դորսւան, առեց ուր ախպէրներ նստաւ. Իրիշկաց ասաց. Ա՞յ ախպէրներ, տիւք ձի չըք ճանչնայ, ես ձեր ախպէրն եմ. առ-

էլք ձեւ մէյ մէկ կնիկ, Զոչ դէվու կնիկն խոռո ջոչ ախազօր։ Միշտ նեկան խոռո միջնեկ ախազօր, պղտիկ դէվու կնիկն էլ առեց ուր խամար։

Էլան ինոնց պեռներ պառցին քշեցին, կնացին. որ ինգեան ճամբախ, էրկու ախազէրներ մնացին հիսու, ասին. Տնաշէն, մենյթ ար էրթանյթ մեր խոր մօտ ինչ ար ասենյթ։ Են էկաւ մե խօստաղ տեսաւ. Մէկէլ ախազէր ասաց. Տո ինչ ար ասենյթ, ինչ ար անենյթ. էրթայնք էնատեղ մէկ չեանձ թերձա (գիւղի անուն) դաշդ որ ճուր չկայ, մէկ խոր ի, դաշ (առաջ) ևս կըմտնեմ մէ փշուր, կըուուամ, եաման ևս կըվախենամ, դօրիս տիւ մտի, տիւ էլ սկուն արա, էլի տիւս, դօրիս էնիկ կասի՞ ևս կըմտնեմ։ Ինչ որ կըմտնի ճուր կըխանի, կըխանյթ, կըպածնենյթ, քեարմ կըքեաշենյթ վրէն, կըթօնենյթ կէրթանյթ։

Ասաց. Աս, ոլա ախազէր, սկուն էլ կլնի։ Համան զանկիւմ զարկին կնացին, ախազօր խասան, կնացին քեանձ մեր դաշդ, մէ անջուր դաշդմ էր՝ նստան։ Ասաց ճոչ ախազէր. ճուր քեաշենյթ մեր տաւըներ ջրենյթ, էլ ճուր չկայ։ Դօրիս ճոչ ախազէր ասաց. Ես կըմտնեմ ճուր կըխանեմ, խմենյթ։ Զվան թալին ախազօր մէջք կախեցին խոր մէ փշուր, պօռաց, ասաց. Ես կըվախենամ. քաշեցին տիւս Դիօրիս (յետոյ) պատիկ ախազէր մտաւ, ճուր քեաշեց խման, յէտին դրուն (ի վերջոյ) չվան կտրեցին շըրըփ, ախազէրն տփիցին մէջ խորին. սալմ քեաշեցին վրը պէրնին, էլան կնացին։

Հատոնյթ կնացին, քշեցին, շաս քիչ Ալատած գիյափ, տիսան մէյ քեօչկ սարէմ, ֆալաքիյ քեօչկն ի. ճոչ ախազէրն ասաց. Արի, ախազէր, նստենյթ էս տեղ, էսօր մեր խացն ուտենյթ, մեր կայվէն խմենյթ, նոր առաւտուն ընենյթ ճամբախ էրթանյթ։

Իտոնց կարգան թափեցին կնացին. տէսան խոնանց ևն դէվն էկաւ, ասաց. Կնիկ, էկա ինչ մարդ են մեր տիւս։

—Ասաց. Ապա ևս դիյտեմ, ճամխորդ են։

—Էյ, ասաց, ձէն մածէ, ձի խօրօտ ճաշմ էկած է։

Մնաց չիւմ առաւտուն՝ տէսաւ իրեյթ խատ կնիկ էրկու մարդ է, ասաց դէվ ուր կնկան. Կնիկ, էսոնյթ դէլ խօրօտ ուտ վելու շըն իդեա, մէ խօրօտմ շախենք, նոր ուտենյթ։

Թող էտոնյթ մնան էտա տեղ, մենյթ դառնանյթ, էրթանյթ վրը Միրզա-Մահմատին, տեսնանյթ ինոր հալ (վիճակ) ինչին ի։

Միրզա-Մահմատն էր ամիսմ մնաց խօրի մէջ, ասաց. Աստւած, ապա իմ հալը ինչին ար էլնի։

Մնաց որ ծանդը բազրգեանմ էլաւ, էկաւ թափեց էն խորի պէրան ասաց. Էլ ուրիշ տեղ ճուր չկայ, նստենյթ, ճուր քեաշենը, խմենք, նոր ընենյթ էրթանյթ։

Մնաց որ փարխաջ ուր կախէն ճուր խմէն. Միրզա-Մահմատ պոռաց, ասաց. Էյ, վով էյք, ճուր ես կըքեաշեմ, մարդ մը մտնէյք, ճուր քեաշեց, հըմէն խման. ինոնց տաւըներն էլ ջրեցին, հետին փարխչին նստաւ ինեւ ասաց. Դօրիս տիւր քեաշէյք, Քեաշեցին, դէ, դէ, ուլա քեաշեցին տիւր, տեսան Միրզա-Մահմատ:

Բաղրգեան ասաց. Տիւ վմզ ես:

Ասաց. Ես էլ չըմ գիտէ, ձի նէա խէր կայ, նէա մէր, նէա մարդ. ես ձի էսա խորի մէջն եմ տիսի:

—Էյ, ասաց, չըս ընի ձի խամար լաճ, ձի տղա չկայ:

—Ասաց. Կինեմ:

Զեռքմ սէբսուկի խալաւ խագիւց. չիւմ բաղրգյնի մարդեր մէկ մէկ ձի պառնէն, էն եօթ պեռ կըպառնէր: Էյ, ասաց բաղրգ գեան, վաստկայ:

Էլան ինոնց բեռ բարխանէն քշեցին կնացին, խասան էն քեօշկ սարի տիւր: Տէսաւ Միրզա-Մահմատ որ ուր ախողէրներ պայտած էնտեղ, էն ինոնց ճանչցաւ, ինոնք ինոր ճանչցան:

Բաղրգեան ասաց. Ընցնենյը էրթանյը:

Զէ, ասաց Միրզա-Մահմատ, մենյը էլ վաղ կէրթանյը:

Էլմ էլ իրիկուն դէկն էկաւ, դուռ իպաց, կնիկ էխան տիւր, ասաց. Կնիկ, էսա ինչ մարդեր են մեր տան մէջ:

Ասաց. Ես չըմ գիյտէ, ես էսա տան մէջ չիւմ իրիկուն պըռնաւոր եմ:

Ասաց. Զէն մ'ածե, կլաւ նէճիրմ (որս) ընդեաւ իմ ձեռ:

Մնացին չիւմ տուաւուն. դէկն էլաւ քյշեց մէջ միլթին. Միրզա-Մահմատ խասաւ յառջն, ասաց. Էյ, լինչ կուզես:

Ասաց. Ձե ուր անեմ:

Խասան հիրար, չիւմ իրիկուն Միրզա-Մահմատ դէկէ վուս դէվուն տփեց գիյտին, վիզ կտրեց, կնաց տուն, ասաց. Տիւք լինչ մարդ էք:

Ասին. Ճամխորդ ենք:

Դէ, ասաց, էլէյք կնացէյք ձեր տներ, ոլա, էսա դէվու կնիկն էլ տարէյք տուն:

Մասե բաղրգեան էլ կէրթէր, դօղրու կէրթէր էն քեաղ-այք, կնացին խասան քեաղայք: Ասպյրով էկան, առին տարան, բլբուլ կուշին դրին բաղչէն, ինչ ձէն էխան տիւր՝ թէ թուփմ, կանաչ խոտ կէր, էն էլ հըմէն չորցաւ.

Դօրեսվան ինչ սիվտակ դէվու կնիկն էր՝ մտաւ ուր հօտէն, զէնիր պննեց ձեռ, դուռ շինեց, ուժ քեաշեց մնաց: Մնչ էն էրկուն էն, աղին ինոնց կըյկտեր, կնացին քէյֆ արին: Մնաց հէվլարին:

բազրգեան էկաւ, թափաւ էն քեաղայքի մօտ: Էնոնյք թօ մնան
էն տեղ, մենյք երթանյք վէր Թռանգստանա քեաղքիյն:

Խոյնք էլ ակիսան, էլան վեր, տէսան որ բլրուկ կուշին
տարիր են. ուամ թալին, ուամ էկաւ կայնաւ վըր Ռոստամու խօր
քեաղքիյն: Թռան էկան քայդքի պիլոր պռնեցին. Թռանդի թա-
զաւոր կանչեց ասաց. Վովի իմ բլրուկ պիրեն, թօդ գեա իմ ջուղապ
տա: Հա հայ կուգեա թէ չէ, էսա քեաղայք որէ կնցուցեմ:

Ջոչ լուն ասաց. Տօ, բարօ, ես եմ պիրեն, ես կէրթամ ջու-
ղապ կուտամ ինոր:

Էլաւ կնաց թագաւուրու մօտ, ասաց. Ես եմ պիրեն:

Ասաց. Տիւ ինչի պիրիր:

Ասաց. Զարկի, կոտրի, առի էկայ:

Թագաւոր սիլէմ (աստակ) իզար վիզ քէյթրվաւ, պռնեց
էթալ էնտեղ, ասաց. Հա հայ, եան ինոր տարող կըզեա՝ եան չէ
էսա քեաղայք հըմէն կաւիրեմ:

Դօրիս խէր կանչեց միջնեկ լաճուն ասաց. Տղա, թնչին էք
պիրեն. արի կնա ջուղապ տուր:

Ասաց. Բարօ, ես եմ պիրեն, կէրթամ ջուղապ կըտամ:

Էլաւ կնաց, թամանդէմ իթալ, կայնաւ. Թագաւորն ասաց.
Կէր ըլնի, թնչին ես իկեն:

—Իկիրեմ ջուղապ տամ քեյ:

Դէ ասա, ասաց թագաւոր, բլրուկ կուշ ինչի պիրիր:

Ասաց. Ես էրկու բեռ ոսկի տվի, առիցի էկաւ:

Թագաւոր սիլէմ իզարկ, էն էլ էթալ էն տեղու Հա հայ, ա-
սաց, էրկու սհաթ մնաց որ էսա քեաղայք աը աւիրեմ, աը վառեմ,
շատ ձի ջուղապ տվէք:

Մէկ տիր բազրգեան էլաւ էկաւ, ասաց. Պաոցէյք էսա
քեաղքից էրթանյք:

Ասաց. Խէր էլնի, բարօ, թնչի:

Ասաց. Ոլլա, հալ խէքեաթ սկնա, ֆրանգայ թագաւոր իկե
կասի. Եան կասէք բլրիւկ կուշին վճկ ի պիրեն՝ զեա իմ ջուղապ
տայ, եան չխօ, էսա քեաղայք էրկու սհաթից սօրա կըկտրեմ:

Ասաց. Բարօ, մարդ կայ որ խէր կանի, խաչօխնայ կանի,
ես էլ աը էրթամ խէրի խամար, պալքից էսա քեաղայք ազատեմ:
Խէրն ասաց. Տօ տիւ թնչին ինոր ջուղապ աը տաս. էն բը-
րուկ կուշ պիրող աը ըլնի, չէ չխօ կսպանի քեյ:

Չէ ասաց. աը էրթամ:

Էլաւ քշեց կնաց թագաւուրու մօտ, թամադէմ իթալ,
կայնաւ:

Թագաւոր ասաց. Խէր ընի, Բնչ կայ, խօրօտ լաճ։
 Ասաց. Իկեռ եմ քեյ պատասխան տալու։
 Ասաց. Դէ, ասա խեմ. Բնչին ես պիրե բլբիւլ կուշ։
 Ասաց. Եմ ձին խէծայ, կնացի հիսնի խողից տիւս էկայ,
 կնացի դէվէրաց խող. կնացի Կարմիր դէվու խող. Կարմիր դէվ
 սպանիցի. կնացի ինոր քեօշկ սարէն պառկայ, ինոր կնիկ էկաւ
 մտաւ խետ եմ կըշտին. ես թուր քեաշեցի զրի մէջ ձի մէջ էն,
 ասի. Զէ, չիւմ իմ մուրազ չը կատարեմ, խողածնի մօտ չըմ
 պառկի. որ չըմ աւագա ահա զյսկօ Կարմիր դէվու ականջներ։
 Էստուց էլա կնացի Սև դէվու խող, նստա վըր աւագ կուլաթին,
 աղչիկմ ձի խաց իպե, չըկերա, ասի. Թօ ձեր դէվ գետ խինյը
 Բնչ կանի, թօղ անի, էն էլ սկուն սպանեցի, կնացի քեօշկ պառ-
 կայ, էլա կնացի. առա քեյ ինոր ականջներն էլ, ականջներ իթալյառ-
 ջեւ էստեղից քշեցի, կնացի, Սիվտակ դէվու խող. նստա խաց կէրա,
 ճուր խմեցի, չիւմ իրիկուն նստա էն տեղ. Իրիկուն էլմ էլ ձի խաց
 պիրին, ասին. խաց կե զնա, քեանի Սիվտակ դէվ չիկեր ի,
 որ էկաւ, քեռ ճոչ պրդուն պղտիկ ականջ կըդնի. Ասի որ
 սկոն ի, ես տեղ չըմէրթայ, իրիկուն Սիվտակ դէվ էկաւ բարդի
 ծառմ վէր թիվին դրած. առաւտուն էնոր խետ էլանյը կոփւ,
 ինոր էլ սպանեցի, թողի կնացի քեօշկ սարէն պառկայ, թուր
 զրի մըջ ձի մէջ դէվու կնիկ. Առաւտուն էլա պիտի գէյ. վէրու
 խաղալմ ձի սաստ իրե. լարեցի տարա ջանավարներաց երկիր
 խանի տիւս Զի պոնիցին տարան մօ ինոնց թագաւոր. Թագաւոր
 էլաւ ձե նամակ օրոխկեց. տիւ էկայը իմ յառջն կտրիցիք. դէվու
 կնիկ ուամդար էր, էկաւ ձի տարաւ. իրեյք տարի պախեց, էլ մէլ
 օրօխկեց մօտ ձե. էկա ձեր զանապան աղւէմն էր, լանգէյմ զար-
 կի չակիսաւ. մտա քեաղայք, էկա քեռ աղջկայ քեօշկ, էն պառկեր
 էր, շամդաններ գրեր էր ոտքերի տակ, փոխեցի, ինձոր կծեցի,
 ճուր խմա, պաքիյցի սիվցաւ. իմ պոկներաց տեղ. էլա էկա քեօշկ,
 տիւ քեռ կնիկ քյնիր էր, դառցա տը էնի տիւս. մէկէլ վիշտապմ
 սնից կիշնէր տակ, խասա զարկի եմ խանչառվ պիվոնեցի վըր
 սան. թէ չըս աւադա, առ քեռ խանչալ զյօկ եմ մօտ. խանչալն
 էխան խոռւ. Դառցայ բլբուլ կուշին առի քէլեցի. էն դէ-
 կերաց մալ մուլք, կնկաեր բարձուցի էկա, էկա խասա մօտ
 վերաց. մալ մուլք, կնկաեր բարձուցի էկա, էկա խասա մօտ
 պապիկ. Թիւլֆաթ (ընտանիք). թօղի պառկէ մօտ, կնացի եմ ճոչ
 ախպեր Ռուսաստան խօտագ էր, կու կըթալէր, առի կնացի. միշնեկ
 ախպէրն էլ Զինմաշինու երկիրն էր. ճուր կըկրէր. ինոր էլ առի
 դառցա, էկա մէ մէկին մէկ դէվու կնիկ տիւցի. Պատիկն էլ առի
 ձի. էկանյը ճամբախ իմ ախպէրներ մնացին յիտե, խօսքեր արին
 մէկ, ասին մեր ախպէր սպանենյք որ չէրթա մեր ոըռ թալի

տիւս, իսո չսպանիցին, թալին խոր, թողին կնացին։ Ես էլ տիւս էլա, բազրգեանի խետ էկայ դէվու տան մէջ, ինոնյք էնտեղ պըռ-վիր էն, դէվն սպանեցի, ինոնց թողի էկան։ Ես էլ խետ բազրգեանին էկա խասաս ստե, որ տիւ դալալ ավիր կանչել, ասիր քեադայք կըլտրեմ, որ առաջ վովի ի, չըգեա պատասխան տա։ Ես էլ էկայ՝ ահան գեօ ես զեռ տիւ, թէ որ սուտ ասի, եմ վիզ քեռ առջե մէկ մազ ի, կտրի։

ԷՇ ասաց, խօրօտ լաճ, տիւ ես պիրե։ որ սկուն ի էսա քեադայք ավի քեյ խաթըը, դէ պիտի ձի խամար Գիւլէի կսէն պիրես։

Ասաց. Ասպա ես կիտմմ Գիւլէն դէօր ի որ էրթամ ինոր կսէն պիրեմ։

Ասաց. Դեօ եօթ ծովու կզղին։

Ասաց. Զի քեառուն օր մօյլաթ (ժամանակ) տու, ես էրթամ Գիւլամբարի քսէն պիրեմ։ Հէտիկմ Ֆուանդի թագաւոր իթօգ կնաց ուր երկիր։

Միրզա-Մահմատ քշեց կնաց էն քեօչկ սարէն, ինչ սիւտակ դէվու կնիկ մէջն էր. էն սամգար էր, ուամ էթալ ասաց. Կըլնես կէրթաս, շատ քիչ Աստւած կիտի, կըխասնես ծովու պէրան, սեղանաքեարմ կայ. շուռ կըտաս զեամմ (անճ) գեօ ինոր տակ, կատնես կը զանես ճուր, ձիմ կըզեա, կըխէծնես, էն թէ քե տանի մօ Գիւլէն։ Էլաւ խէծաւ ուր ձին, շատ քիչ Աստւած կիտի, կնաց ընդեաւ մէ խատ մէշէմ (անտառ) գիրմ վէրու խազալմ ուր ձիու ուաքերաց մէշէն թուաւ տիւս. գիրմ Միրզա-Մահմատ ուր ձին իթող յիտեն, կնաց մտաւ հէրիմ մէշ (այրի) ընդեաւ վերու ոչխրի յիտեն, մտաւ հէր. էկա հէրի մէշ ընդեաւ վէրու հիտեւ Խազալն էր կնաց մտաւ մէշ պազչիմ. մտաւ գէվերաց բազչէն էր, ասաց, ջայնամ, մտնեմ ճուրմ խմեմ նոր պանեմ. կզվաւ որ ճուր տը խմէր, խազալը փախաւ, մտաւ քեօչկի մէշ. էն էլ էլաւ մտաւ քեօչկի մէշ, տէսաւ որ քեառուն գէվ նստած գիւտն կանեն։

—Ասաց. Բարե ձե, դէվիր։

—Ասոծու պարին՝ թնչ կուզես։

Հայ հայ, եան եմ խազալ տւէք, եան ձե կը սպանեմ, շուռ արէք։

Տիւ մասի որ խազալը դէվէրաց քեորն էր, հա կէրթէր, մարդեր կըխապէր, կըպիրէր դէվիր կուտէն։

—Հա, հա իմ խազալը. եա ձե հըմեն կըքեաշեմ սուր,

Դէվիր իրիշկացին մէկ զմէկու յիրես, ասին. սկնէմ ժամմ-

նակ մարդ չըր իգետ ստեղ սկնա ասի. կայ չկայ էսա զօռուա
մարդ ի. ձէն միանէյք, իրինք ինչի կը նի սօն (վերջ):

—Ասին, Զանըմ, մենք խաղալ չընք տիսեր:

—Չէ չըմ գիյտե, ոը պիրէյք:

Դորու գէվիր էլան կնացին, աղջիկն առին էկան. ասին. Ե-
սա մեր քեորն ի, էն խաղալ կը նի սէյրի (դիւթուած) կէրթա
դաշտ, կան կը կետ:

Ասաց. Չէ, էն խաղալ կուզեմ, չէ չիս ձե կը քեաշեմ սուր:

Նաշար վէրէնտեր կը կարի, կասեն. Աղջին, մէ ինոր առջն
էլի սէրի, որ էնի խաւատայ:

Աղջիկն ի էլմ էլ կէնի վէրու խաղալ, նոր էնի կաւատայ
էյ կասի, գէվիր, ևս էլ կէնեմ ձե ախպէր, կմամ ստա:

—Դէ լաւ, մենյշ էլ սկուն պանմ կուզենյք, զէ տիւ կաց
տուն, մենյշ էրթանյշ նէնիր (որս). Ալա էնա էրկու կաշէ տկեր
տար ոտմ ճուր պե, որ մենյշ զեանք խմենյ:

Դէվիր էլան, կնացին նէնիր, Միրզա-Մահմատ էլաւ տկեր
առեց, տէսաւ բնչ. հիրար կանմ տայ. մնաց դա. իրեկուան գէվ
ախպէրներ էկան ասին ճուր պէրմը ես. կասի չէ, ինչի՞ տօ, ասաց,
վով ձե խամար դայիմ ճուր տը կըր որ խմէյք. սկուն ամանմ պէ-
րէյք որ մէկ զիր էրթամ եօթ տիկ ճուր տանեմ զեամ:

Զոչ դէվն էր ասաց. Տօ վաղ (հեռու) կացէք, էսա որ մեր
տկերաց անուն կը դնի, կասի պատիկ են, ապա մեր զյլօխ ինչ
տը խանի, Դէ որ սկուն ի՝ վաղ կնա ցախէ, պէ կեր իփենյք:
Միրզա-Մահմատն էր էլաւ կնաց, չվան իթալ մէշի (անտառի)
պիւլոր, կապեց, էկաւ տուն: Ասաց. էկէյք էրթանյք ցախեր տվէք
պիւլոր, կապեց, էկաւ տուն: Ասաց. էկէյք էրթանյք ցախեր տվէք
պիւլոր, կապեց, էկաւ տուն: Ասաց. էկէյք էրթանյք ցախեր տվէք
պիւլոր, կապեց, էկաւ տուն: Ասաց. էկէյք էրթանյք ցախեր տվէք
պիւլոր, կապեց, էկաւ տուն:

Դէվիրն ին, էլան մէյ մէկ էրկու գէյրան շըլկիցին, էլան
կնացին տուն. մէկ մէկու ասին. էսա չէլաւ. ապա մեր տուն
իսոր ձեռնով տը քեակենյք: Էկէյք փախնենյք:

Դէվիր մէ տիր էլան փախան:

Էսա Միրզա-Մահմատ մէնակ մնաց մէջ էսա տան:

Տէրմ չկայ, ասաց. տօ, Աստւած իմ տուն չաւիրի, ես մէնակ
մնացի ստեղ բնչ. ես եկա, որ տը էրթէ Գիւլէի կուն պիրէ: Էլաւ էն
տուն ստեղ էթող, կնաց. շատ կնաց, քիչ կնաց Աստւած կիսի, էրթէ
էլաւ կնաց գեղմ խասաւ. տէր Աստւած ես գեոր էրթամ. վուա
ասաց. ես տը էրթամ էնա կտրտած, կոդրած տան վրէն: Կնաց

տիւս իսպաց, իրիշկաց, որ չըուտ (մերկ) պառաւմ նստե թօրվան շուրթ. էյ ասաց, պառաւ, մատիր (հիւր) շըս շմիսեւ.

Ասաց. Մեռնեմ քե, նէս կայ որ ուտեմ, նէս կայ որ խմեմ, դեմր քեյ շախեմ:

Ասաց. Առ քեյ կուցմ ոսկի, տար, կնա մէջ քեաղքիյը, տեղ չուլ (տեղաշոր) կերակուր առ, արե. ուտենյք, խմենյը, խենյը Աստուած ինչիս կանի:

Պառաւն էր կնաց քեաղայք, տեղ ջուլ, կեր, կերակուր առեց էլաւ, կէրան, խման, պառկան քյնան:

Գիշեր ծարաւցաւ, ասաց. Մամիկ, պուտմ ճուր տուր խմեմ, Պառաւ էլաւ, շաեց, իտու Միրզա-Մահմատին, խմաւ:

Ասաց. Մամիկ, էսա ճուր սկուն ինչ շօր էր. Բնչի:

Պառաւն ասաց. Քեյ մեռնեմ, քեյզնէ ինչ պախեմ Աստեռց, ոլլո շեռ էր տվի խմար: Մեր գեղի ախաղրի մէջ վիշապմ կայ, ամեն ուրբաթ օր կընի տիւս, մէյ խատ աղջիկմ աը թալենք ուտի որ ջուր գայ՝ պիրենք չիւմ էն մէկէլ ուրբաթ օր: Դօրով ի (հէր-թով) էսօր դօրն իկի թագաւուրու աղչկան: Նազով կէրթայ, ճուր չունենք:

—Ասաց. Պառաւ, ինչ կեախ աղչիկ կը տանեն՝ ձի խապար տաս:

Ասաց. Խա, էն կեախ ինչ թագաւուրու աղչիկ տանեն, կոռց գմրոց կինի քեաղայք:

Ինչ աղչիկ տարան, կոռց գմրոց ընկաւ քեաղայք: Միրզա-Մահմատան էր, էլաւ կնաց. տէսաւ որ թագաւուրու աղչիկ ձեռ ոս կապիցին էրկիթէ ցից, թողին կնացին:

Միրզա-Մահմատ խարցուց. Աղչի, քեյ Բնչի են կապած ըստեղ:

Աղջիկ ասաց. Մատիւ քեծու ես, չըստիսնայ որ մեր քեաղայք ճուր չկայ. վիշապ ձի աը ուտի, որ ճուր ընի, քեաղայք ծարաւ ի, ծարաւ չը մեռնին. մատիւ մեր քեաղքէն յես:

Աղչիկ ոտքեր, ձեռքեր կապից արձկեց, ասաց. Աղչի, ես էսա շարաթմ ի որ չիմ քյնե. իմ զյոլիս կըդնեմ քեռ գեռք կըքյնեմ, ինչ կեախ վիշապ կուգեա, տիւս կէնի, տիւ ձի խան վեր, ես ինոր աը սպանեմ: Միրզա-Մահմատ քյնաւ, չքյնաւ, վիշապ էլաւ տիւս, հըմա աղչկայ ոտքեր ձեռներ թուլցաւ, հախու ձէն չըկարցաւ խանէր: Սկում էկաւ մեն էլաց, որ պուտմ արտառնք կաթաւ. Միրզա-Մահմատի յիրիսի վրէն, ակխաւ Բնչ, քիչ էր մեացե որ վիշապ ինոր հըմա աը ուտէր:

Էլաւ, վեր թռաւ, քեաշեց թուր, վիշապին պրաեց, կտրտեց, ինոր արնի ջուր էլաւ կնաց: Համա քեաղայք քեաղքով դիպաւ, ճուր կընեց:

Աղջիկ խասաւ ձեռ թաթիսց արնի մէջ, ոըփեց Միբզա-
Մահմատի քեամկին, փախաւ կնաց տուն:

Խէր որ տեսաւ ուր աղջիկ սաղ սալամաթ տուն էլաւ, ա-
սաց. Հայ կիյտի ոռօսպի (անառակ). տիւ քեաղայքմ տաւիրես
ինչ ի, քեյ խամար:

Աղջիկ ասաց. Պապօ, դալալ տու կանչել որ արնա ջուր
չըկրեն, չիւմ վիշպի արուն ցամքիյ: Ուս սպանեցին:

Լաճն էր էլաւ չինարի ծառմ կէր էտա ախարի վրէն, խաւ-
քիւ պոնմ էլ վէր էն ծառին, ասաց. Տը էնիմ էսա վիշապի կտոր-
ներ լցեմ ինեւ:

Վիշպի կտորներ իլից ինե, պառկաւ էնտեղ, քյնեց թահ-
նայ, ոըհաթի: Տիւ մասե որ էտա ծառի վերգու խաւքն էլ ուր ճե-
տերաց կուրպան կընէր որ կուգէյր վիշապ կուտէր. էլիր էր ա-
րեյգեական դէմ պոններ էր, մութն էր արե վէր աշխրին, որ վի-
շապ ուր բոն չըտիսնէր, գէյր ուր ճիտերն էլ ուտէր:

Ինչ տէսաւ սևսայեմ գեօ ուր պոնի տակ, մէ տիր լցւաւ, իրե
որ զանէր վերուցէր:

Ճետեր էլան առջե ասին. Աստծու սիրուն ընի, մանե, էն
մեր դիւշման ի սպաննեւ: Ինչ աշքեր իպաց տէսաւ սև կօնմ գեօ
փուած գեյտին, ուր աշքեր խփեց:

Խաւքն ասաց. Խողածին, մը վախենայ. Ինչ ի քեռ մուրազդ
ասա, քեռ ասելին ասա, ես կըկատարեմ:

Ասաց. Պան չեմ ուզի քեյզնից, մինակ թէ ձի տանես իմ
խօր երկիր:

Դէ, ասաց. Եօթ խատ դմակ, եօթ կիդր գիյնի առ արի,
քեյ տանեմ քեռ խօր երկիր: Մէ խատ էլ չախմախ առ խըքեյ-
ինչ կեախ որ. իմ փառ (փետուր) տաս կրակ՝ ես քեյ կրիսանեմ:

Դօրում Միբզա-Մահմատ նստաւ վըր խաւքու թեվին. իրե
խասաւ Միբզա-Մահմատի խօր աշխար էլաւ տիւմ, ասաց. Դէ
կնա: Զէ, ասաց. Տիւ կնա՝ նոր ես կերթամ: Խաւք գիյտէր որ էն
յետին դրվայ միս հիսնի միս էր, թողեր էր ուր լիզուի տակ
չէր կիրեւ:

Ինչ Միբզա-Մահմատ էլաւ կնաց, թօփալ կը քէյլէր, խաւքն
ասաց. Արե իմ լեզուի տկէն խան քեռ ճուռ (ազդը) դի տեղ,
իմ փառ թաթիսի, ճուռ քսի վրէն, կը ժրի:

Տօրիս էլաւ արաց ինոր սսածի պէս՝ ժրաւ էլաւ կնաց ծո-
վու պէրան, կրակ արաց՝ խաւքիւ փառ խոռ կրակ, խաւք Փը՝
էլաւ նստաւ վրէն, կնաց եօթ ծովու կղղին էլաւ տիւմ. կնաց
փռանկի տիւռ էպաց մտաւ ներս, տիսաւ Գիւլսումի Գիւնար գեօ
նստե դա:

Բարե, ասաց:

Ո՞յ Աստծու բարին, խողածին, տիւ ինչին էկար ըստեղի: Խաւըն ուր թեփով, օձն ուր պորտով ըստեղ չէր կանա գեա, տիւ ինչին էկար:

— Ասաց. Ոլա հալ հէքեաթ, ևս գեամիչի ի (նաւազար) քեամին իդար ձի իդե ըստեղ, իիան տիւս:

Աղջիկն ասաց. Դէ նստի, կե խմի, էլ տիւս էրթալ չկայ քեյ:

Օրմ էրկու, իրեյք, կէրան, խման, մնացին դմ. օրմ ասաց. Դիւլսումի Դիւնար, տիւ ինչին էկար էսա եօթ ծովու կզպին:

Ասաց. Թեռ պէտքն թնչ ի, քեռ խաց կե, քեռ ջուր խմի, կաց չիւմ մեռնես:

Դէ զէ ասա, ինչին տիւ ընցայք էկայք եօթ ծովու կզպին: Դօր տեսաւ որ, մնդի մէջ մէկմ դրեր են. էրկու շան լակուտ էլ կապեր էն մօտ, փշրանքներ, քեասէյք որ լվէն, կըպիրէն կը թափէն ինոնց առջև: Մնդիկն ծեռմ կէլնէր կուտէր:

Ասաց. Դիւլսումբար, էսա ինչ պան ի, ձի պատմի խեմ:

Զէ, կասի, որ իմ կսէն քեյ անեմ, քեռ վիզ տը զանեմ:

Էլաւ թուր պատից իխան տիւս, իտի ուր կուշտ. ասաց. Ահա խետ որ ասեցի քեռ վիզ տը կտրեմ, քեռ մեղք քեռ վիզ:

— Ահ, ասմա:

— Ասաց. Չարայ չկայ խէտ որ ասի՞ քեռ վիզ տը կտրեմ:

— Ահ, խմա:

— Ասաց. Տօ տիւ զիտենս էնա կնիկ վով ի:

— Զէ, ասաց:

Ենիկ իմ կնիկն ի. ևս էլ Դիւլստան թագաւորի ախպէրն եմ:

Ասաց. Ես ինչ կանգար որ կնիկ պիրիցի ձի, հըմէն եար (աիրեկան) պանեցին. ևս էլ ասեցի. տօ ես սկուն աղջիկմ տը պիրեմ անեմ ձի կնիկ, որ հիսնի կաթ ծծած չըլնի: Ես էլ էսա աղջիկ մեղրով, կաթնով կիրցուցի, արի ձի կնիկ: Դօրսվան ձի էլ իրեյք խառ ձի կէր. իմ ձիեր որ վըր աւուր կը ժարանէն. ևս էլ տարին մէկ սէյիս (ձիապան) կըպանէ, տարին մէյ խառ կըսպանէ: Դորուս մէկ օր էլաւ Դիւլստան չաշալմ պանեցի, արի խօդադ. տիւ մասն, ինոր մօտ քյնու ուլինիկ կէր, զիշեր կըթալէր իմ ականջներ, կըխէծնէր ձին, կէրթէր մօտ զէվիր, ուր պան կըտիսնէր կըթօդնէր կըգէյր, քյնու ուլինիկներ կըխանէր, իմ վիզ կայիմմ կը զյրկէր կասէր. Ախ, մեռնեմ քեյ, ևս քեյ պէս մարդ դմօր տը զնանեմ:

— Սկուն ի՞ Դիւլստամպար:

— Ահ, ձէն խոռ ներսանց:

— Տօ խայ, էլ չըմ ասի. քեյ չըմ սպանի:

Չէ, ասաց. ասմ, թայլա ձի սպանի:

Ասաց. Տօ մարդ, արի մանե, մըլնե, քեյ տը սպանեմ:

Չէ, ասա թայլա ձի սպանի:

Ասաց. Օրմ էլեր էր քյնու ուլնիկմ թալեր էր իմ ականջ, մէկ էլ չաշլու ականջ. կնացեր էր չիւմ առաւտուն, մնր ձեանք կայնեցուցիր էր ցրտու յառջն, առաւտուն խիծեր էր, իկեր էր: Ասի չաշլիկ, քեյ կսպանեմ. էսա իմ ձեանք ինչի՞ կըժարանան:

Ասաց. Ախ, ձի մսպանե շիւմ վաղն էլ ևս քեյ կասեմ:

Մնաց մէկէ օր չաշլիկ շէր քյնե, ինչ իմ կնիկ քյնու ուլնիք պիրեր էր թալեր էր ինոր ականջ, էն համան շոտմ խաներ էր տիւս: Իմ կնիկ խեծեր էր, կնացեր էր: Էն էլաւ էկաւ մօտ ձի, ասաց. Աղմ, աղմ, իլի վեր, քե կնիկ կնացի ձիմէ ես խէծայ, մէկ չաշլիկ: քշիցինք, կնացինք, ձիեր սովրիբէն, տողրու կնացին էն հէրի տիւս կայնան: Տէսա զե գէվեր հըմէն պառկած էն թալե վեր ինոր, էն թալե վեր ինոր, շիւմ իկե դուան հետև ինկե: Իմ կնինից էլ էրկու լաճ էլած, մէկ թալե էն ծիծ, մէկ էն ծիծ, թայնայ պառկած քյնած: Հէտի գորսւան ես մտա ներս, հըմէն սրպեցի, էրկու լաճու վիզ կտրեցի, թալի խուրդու մէջ, առի պիրի կախեցի մնից, էկայ պառկայ: Առաւտուն ակիսա էլմէլ իմ վիզ զե գյրկե կըպաքիյ կասի. Ա՛խ Գիւլ-Սուսամբար, էլ մըջ աշխրին քեյ պէս իրիկ ժրտեղ կնդնեմ. գեօ կուլա, կուլա որ ինչ ասսո, տօ ընչի կլաս. ասաց. Ախ, ձի քեասուն ախպէր կէր, էրկու էլ մխպօր լաճ սպանած. տօ քեյ ժրտեղէն ախպէր, տիւ նախըրճու աղչիկ էր, քեյ նէտա խէր կէր, նէտ մէր, ես ոսկով կշիցի առի:

—Ասաց. Չէ: Ես էլ իմ սըսս տիւս չթալի: առի իմ կնիկ, խէծա ծովու ձին, փախա էկա սսեղ: Իմ կնիկ զրի մէջ մնտկին, էրկու շան լակոտ զրի ինոր առջն, մնաց էն տեղ շիւմ Թրիյատոս զեա դատաստան: Ահա էսա ի Գիւլէի կսէն. զէ արի քեոյ վիզ կտրեմ:

Ասաց. Աղէկ, կայնի մէկ էրթամ ծովի հափ աղօթմ անեմ, նոր իմ վիզ կտրի:

Էլաւ կնաց ծովի հափ, մազ իտու կրտակ, խաւք Փըս, թռաւ, էկաւ էնտեղ, նստաւ վըր քեամկին, թռաւ. ասաց. Է՛յ Գիւլիսամբար, ես կնացի, մնացիր պարի: Գիւլում էլաւ տիւս, թռում իթալ շըպանեց, մէկէլ իթալ՝ լըպանեց. մէկ գիր էլ Գիւլամբարին դիրպաւ, էլաւ էրկու կտոր մնաց: Էկաւ խասաւ ծովի էսա. տեխաց պէրան, խաւք թռաւ, լաճ էլաւ կնաց. մէկ օր մնաց որ տը խասնէր:

Մենյը դառնանյք վէր Ֆոնգայ թագաւորին:

Քեառառուն օր ընցաւ. Փռանկներ ակխան էլան, կնացին, էլմէլ քեազքիյ պիւրոր բռնեցին, ասին. Դէ եան Գիւլէի կոչն, եան քեադայք կըկտրենյք:

Միրզա-Մահմատ կնաց, կայնաւ. թագաւորու յառջն. ասաց. էկայ. թագաւոր ապրած կենաւ:

—Աղէկ, գէ պատմի խեմ, ինչին կնացիր, ինչին խասար. ինչին պիրիք, առան:

Միրզա-Մահմատ ձեռ իտի սրտին նստաւ, մէյ մէկ պատմեց. ուշա կնացի: Շատ կնացի թէ քիյչ, խասա մէյ խատ մէշիմ մէջ. վէրիմ ձի սասատ էկաւ, լարիցի, տարա մտուցի հէրիմ մէջ. կնացի տիսա քեառառուն գէվ կէն էնտեղ. էն վերին էլ ինոնց քեորն էր: Թիչմ մնացի էնտեղ, թողի էնտեղից կնացի գեղմ: Պառվում առն էլա մէյվան (նիւր), էն քեազքի մէջ ջուր չկէր խմին. կնացի զեօր թագաւորի աղչէկայ խաթրին, զարկի վիշապ սպանիցի, աղջիկն աղատի. վիշապու կտորներ լցի ծառի վրէն խաւքի պիւրնի մէջ՝ ճտեր կէրան: Խնոնց մէր իջաւ տակ, որ ձի պիտի անէր կտոր կտոր: Ենտեր էլան առջն, ասին. Մանե, էնիկ մեր զիւշման սպանեց: Խաւքն ասաց. Ի՞նչ կուղիս, ասի. Զիկ տար մեր երկիր. իտի վըր ուր թեվին, իպէ մեր աշխարհ էխան տիւս. փառմ իգի ևմ ջոպ, ասաց. Խնչ կեախ որ քիյ լազըմ կէնի, տու կրակ ևս քիյ կըխասնեմ: Ես կնացի հօթ ծովու պէրան, նստայ, փան էր տիի կրակ, խաւք ֆըռալէն իջաւ, նստայ վրէն՝ թռաւ, ձի տարաւ եօթ ծովու կզզին իտի: Կնացի մօտ Գիւլամբար, նստաւ՝ ուր քսէն ձի արաց, պրծաւ, ասաց. գէ էլի, քեռ վիզ աը կտրեմ:—Ասի. Աղէկ, ձի իզին (հրաման) տու, չիւմ էրթամ տիւս ազօթք անեմ, կեամ. նոր սպանի: Էլա կնացի ծովի հափ, փառ տիի կրակ, խաւք թռաւ էկաւ. նստայ վէր ուր թեվին. ասի. մնացիր պարի, ևս կնացի: Էլաւ Գիւլամբար թուր իթալ իմ յիտե, չըպանեց. մէկէլ իթալ՝ չպանեց, մունջ տեղն ու տեղ պատուաւ: Ես էլ թողի էկա, էլայ արիւս:

Ասաց թագաւոր. Դօրիս խալալ սրտով ըլլուլ կուշին տվեցի քիյ:

Խնչ ասաց թէ չէ, ըլլուլ կուշ կանչեց. էն ծառ ծաղկըներ որ չորցիր էն մէկ տրուց կանաչըցան, հըմէն ծառ ծաղիկ մէկ գեռն առեց: Էրունք-թաշունք ուրըխցան: Դեօր էնիկ փուանդի թագաւոր էլաւ կնաց ուր երկիր:

Մենյը զառնանյք վըր Միրզա-Մահմատին:

Միրզա-Մահմատի խէր նստեր էր էնտեղ, հըմէն բան լսէր էր. իպէ նորէն ուր լաճն արաց ուր լաճ, առեց կնաց տուն:

Էն էրկու աղպէրներ տիսան որ ինոնց պստի ախպէրն է-

կաւ, ինոնց հալ (վիճակ) եաման տը էլնի. Թողին փախան, ին օր ինչ Միրզա-Մահմատ տը պսակվէր, ասաց. Տօ հուր են իմ ախ-ակէրներ:

Ասաց թագաւոր. Փախան:

Զէ, ասաց, չիւմ իմ ախպէրներ չըգեան, ես չեմ պսակվի, ելաւ խէծաւ ձին, շատ կնաց, քիչ կնաց, խասաւ կանդա-հարա քեաղաք, ուր ախպէրներ կնտաւ, առեց իպեւ նոր քեառ-սուն օր, քեասառն գիյշեր խարսնիս արաց. էրկու դէվու կըյտերն էլ առեց, խասաւ ուր մուրագին,

Պատմեց 1910 թուին օգոստոսի 18-ին Հայոց Զորի Թերձ գիւղի բնակիչ Մանուկ Մահակեան անգրագէտ գիւղացին:

Խ Ե Վ

Վախտով ժամանակով կէլնէր մէկ թագաւորմ: Էտա թագա-ւոր ունէր իրեյք խատ լաճ:

Աֆանդըմ, էտա թագաւորու մեռնելու վախտն էր, կանչեց իրա իրեյք լաճ ասաց. Ես կըմեռնեմ, այ որդիք, ձի իրեյք աղջիկ կայ. խաւք կուգեա՝ տվէք, գէյլ կուգեա՝ տվէք, առջ կուգեա՝ տը-վէք, ձէն մի ածէք, տվէյք թօ էրթան:

Մնաց մէ տարիմ էրկու, թագաւոր մեռաւ. ժամանակմ վրէն ընցաւ. տեսան առջ էկաւ, կնաց գօղրու վըր խոզկընի աթոռին նստաւ. Զօջ լաճ ասաց. Տօ, ետպանի առջ, էտ ինչ էր, որ էկար, վըր փեսա աթոռին նստար:

Ասաց. Ոլլա, ես իկեր եմ ձեր քեոր տը առնեմ ձիկ կնիկ:

Զօջ ախպէր ասաց. Տօ, ես եմ քեոր կըլնեմ տամ առջման, աշխար մարդ կտրմաւ:

Միջնեկ լաճն էլ սկոն ասաց:

Մնաց պստիկ լաճ. պստիկ լաճ ասաց. Ես իմ խօր ոսեաթ (կտակ) չեմ կոտրի. ես իմ քեոր կտամ առջուն:

Պստիկ ախպէրն էլ էլաւ կանչեց էրկու մօլլա իսկե, ուր քեոր պսակեց վըր առջուն: Էրկու շաքամթ մնաց, առջն առեց ուր կնիկ՝ կնաց ախպէրներաց կաց պարև արաց, կնաց ուր տուն:

Մէկ ժամանակմ ընցաւ, տեսան մէ գէյլմ պոթպոթալէն էկաւ նստաւ վըր խոզկնի խաքամլուն: Էլմ էլ զօջ ախպէր խարցուց ասաց. էյ ետպանի (վայրենի) գէյլ, ինչ ես նստե էղա տեղ:

Ասաց. Իկեր եմ ձեր քեոր տանեմ ձիկ կնիկ:

Դէ, ասաց. Ջայնվի, տիւ սարի ետպանի գէյլ, ես իմ քեոր չըմ իտա քեյ:

Կանչեցին միջնեկ ախալէր. էն էլ ասաց. Այ գէյլ, ևս քեզ քեոր չըմ խոտ. ջայնվի կնա:

Կանչեցին պատիկ ախալէր պէրին. Է՛, ասաց, գէյլ. Բնչի ևս իկե:

Ասաց. Իկերեմ ձեր քեոր կուղեմ ուշ տայք ձիկ:

Պատիկ ախալէր ասաց. Վըր իմ աչիչ. խաղար պարով, ևս իմ խօր ոսիաթ չըմ կոտրե. արի, իմ քեոր խալալ սրտով կըտամ քեյ, էլաւ կանչեց էրկու մօլլա, էրկու խօջա, ուր քեոր պատկեց վըր գէյլուն:

Դէյլն էր ժամանակմ մնաց էն տեղ. յետու կաց պարև արաց հըմէնին, առեց ուր կնիկ, իթող կնաց:

Աֆանզըմ, ժամանակմ էլ մնաց, տէսան մէյ խաւքմ, ֆռաւ էն էկաւ նատաւ. Վըր խոզկնի խօքեամլուն: Զոջ լաճ խաւքին խարցուց, ասաց. Է՛ խաւք, Բնչի ևս իկե:

Ոլլա, ասաց. Իկերեմ մօտ ձե, ձեր քեոր տանեմ ձիկ կնիկ:

Զոջ ախալէր ասաց. Տօ խաւք, տիւ էրկինք կթոնես, աստղերու խնա կը խաղաս, ևս իմ քեոր Բնչին տամ քե, դեմք ուշ տանես կորսցուցես. Հէ, ևս ըստրոււ էլ ըստկնայ պան չեմ անե:

Միջնեկ լաճ էկաւ, էն էլ սկզն ասաց:

Պատիկ լաճ էկաւ, խարցուց խաւքիւն. Տիւ Բնչ կուղես:

Կաց. Իկերեմ քեռ քեորն առնեմ ձիկ կնիկ:

Տղէն ասաց. Վըր իմ աչիչ, ևս իմ խօր ոսիաթ չըմ մոռնայ. քեոր կուրպան արերեմ քեյ, առ տար. քեյ բումբարայք:

Էլաւ էն էլ պասկեց վըր խաւքիւն. խաւքն էր շաբաթմ մնաց էն տեղ չը մնաց, էլաւ առեց ուր կնիկ, կաց պարև արաց ինսնց՝ կնաց, թռաւ, թռաւ տարաւ ուր տեղ:

Իրեյք աղջիկներն էլ տվին, առին կնացին:

Մենյք զառնանք վըր իրեյք լաճերաց:

Լաճեր էլան օրմ ասին մէկդմէկու. Էկէյք մենյք էլ պատկվենք, էլան նատան գիէնջարէն, խնձոր զարկին. Զոջ լաճ իզար, ուր խնձոր առեց Սադրազամի աղջկան. միջնեկ ախալէր ուր խնձոր իզար դիպաւ. վազիրի աղջկան. պստիկ ախալէր քեանի տիր որ խնձոր իզարկ, ուր ինձոր կնաց զաշտիմ մէջ, մէ քյուա քեարի քեօմիմ վրէն ընդեւաւ:

Տօրսվան էլաւ կնաց էն քեարէ քեօմի վրէն իրիշկաց. ախան մէ կոտմ (գանգ) էլ հաւել բանմ չկէր. էտա կօտ առեց էկաւ. Ասաց. Աստուած, էսա կօտն էր որ տիւ ձիկ կոմաթ արիր. կօտն առեց իտի ուրենց տան պատուխան. մի ժում մ (ժամանակ) մնաց:

Խնոր ջոջ ախալէրներ էլան խարսնիս արին. քէֆով ուրան խութենով. պստիկ ախալէր առեց ուր կօտ մտաւ ուր հօտէն:

Հըմէն օր՝ էն էրկու ախտէրներ կը ընէն մէյտան (հրապարակ), ինոնց կնկտեր կը նստեցնին փէնջարէն կը զանէն, կը խաղէն ինոնց թամաշայ կէնէն: Հըմէն օր ախտէրներ կասեն պստիկ ախտօր.—Խողեր վըր քեռ կօտին, հա կնա փակվի հօդէն վըր քեռ կօտին, տեսնանք ինչին ար ըլնի. մեր կնկտեր նստին փէնջարէյք թամաշ անեն: տեսնանյք տիւ ինչ աը խասկնաս:

Օրմ լաճ սկոմ էլաւ, սկոմ էլաւ, որ էլ չը խամբերեց, ասաց. Տօ, ոլլա, ևս ձեր կըտեր կը տամ իմ կնգայ էղմէնդ: Ինչին կնգայ էղունդ (եղունդ):

—Խա, ասաց. իմ կնիկ, ինչ հվարին (երեկոյ) ուր կօտ կը պատոի, կը լինի տիւս, որ տիւք էն ժամանակ ինոր տիսնէյք, ձեր խելք գյլխուց կէրթա (կերթայ) խուրն խընդէն մէ աղջիկի ի:

Ինոնք էլ ասին, որ սկոն ի, հէվարին որ ճրագներ կը կըպ-նեն, էն ուր կոտից տիւս կէնի. տիւ խասի կօտ թալ (ձգէ) կը-րակ, կօտ կիրիցի, էլ էն տեղ չգտնի որ մտնի, կըմնա տիւս-մենյք էլ կըտիսնանյք, խալին էլ:

Պատիկ ախտէրն էր, էլաւ կնաց տուն, ինոնց ասածին պէս էլ արեց: Նէվարին ճրագներ որ վառեցին, կնիկն էր պատխանից—ուր կօտից-տիւս որ էլաւ, աը տան մէջ պան անէր, էլմ մտնէր կօտ. համա տղէն խասաւ, կօտ թալեց կրակ, վառեց: Աղջիկ՝ գէս գէն արեց, էլ չըկարաց տեղմ մտնել, մնաց տիւս:

Դիրմ Խէք խէծաւ, ուր եօթունաձին, էլաւ էս կնիկ առեց, փախաւ էն կնիկ Խէքի հախուն (երկիւղից) փախեր էր, մտեր էր կօտ. ինչ կօտ վառվաւ, էլ տեղ չէլաւ մտնէր. դիրմ, Խէք առեց փախաւ:

Լաճն էր էլաւ, ընգեաւ յիտև, շատ քիչ Աստուած կիտի, կնաց, կնաց, ինգեաւ մէ էրկիրմ. ուստա էլաւ մէ քեօչկ սարիմ տէսաւ. կնաց նստաւ վըր աւազ-կուլաթին (աղրիւրի ական): Էնդիմիէն խանըմմ ուր փէնջարից իրիշկաց, տէսաւ, որ մարդմ գես նստե վըր աւազնին: Էլաւ ուր խալաեղ (աղախին) կանչեց, ասաց. կնա տնս, խարցու, խեմ մայան (անպատճառ) անօթի ի, որ իկե նստէ էնտեղ. առ խաց, տար թօ ուտի, էնի էրթա, որ մկա առջն էկաւ՝ ինոր պրտուն պրտուն կանի:

Խալաեղ էկաւ ասաց. Ախտէր, իլի խաց կե, կնա, մկա որ առջ էկաւ, էլ քեռ խոգին չի փոթնս ինոր ձեռնէն:

Լաճ ասաց. Ըստկնա չընէր, որ արի՛ վոլլա ևս չըմ էրթա ըստեղէն, թօ ձեր առջ զեա խեմ ինչ աը անի ձիկ:

Տղէն նստաւ զն, չըր էրթա:

Խալայեղ էկաւ ասաց. Խանում, վոլլա, չերթա, կասի թօ ձեր առջ զեա, ինչ կանի ձի թօղ անի:

Աղջիկ էլաւ ինքը էկաւ, ասաց. Այ տեսնամ իմ աղպէրներից չե. Էկաւ տեսաւ որ դորթմանց ուր պատիկ աղպէրն էր, զետ վրը յաղպրին նստած: Առեց տարաւ ուր տուն. փաթութեց խսիր, անկեց գռան յետեւ: Իրիկուն առջն էկաւ, պոթպոթալէն մտաւ տուն, ասաց. Տօ կնիկ, էսա տնից մարդ-մարդախոտ կուգեայ:

Կնիկ ասաց. Այ տնաշէն, սարէն տիւ կուգեաս, ձորէն տիւ կուգեաս, մարդ-մարդախոտ քեյզնէ կուգեա:

Չէ, ասաց մարդու խոտ կուգեայ ըստուց:

Եյ, ասաց, պալքի իմ ախպէրներաց մէկն ի իկե մօ ձիկ, որ տեսնաս թնչ տի անես:

Ասաց. Որ ջոջ ախպէրդ ըլնի, ինոր ջոջ պրտում ուր ականջ կը թողնիմ, թէ որ միջնեկ աղպէրդ ըլնի, էլմ էլ սկոն կանհմ. ալս որ պատիկն ի, վրը իմ աղիդ աչքին, պարով, խաղար պարով թօ զեա, կը նողունիմ:

Խա, ասաց կնիկ, ոլլա իմ պատիկ աղպէրն ի:

Դէ, ասաց, գէ արի խանի տիւս:

Էլաւ աղպէր խարից խանից տիւս, ուրախցան մէկզմէկու վրէն, փաթթթզվան ասին, խօսին, նստան սեղան: Խաց ուտելուց, ուրենց քէփ անելուց սօրա արջ խարցուց թէ ախպէր, որտեղ տիւ էրթաս:

Տղէն ասաց. Ոլլա, հալ-կսէն էսըսկնա ի. Խէք էկաւ առեց իմ կնիկ փախաւ. ևս էլ էկեր ևմ տիւ էրթամ յետեւ, իմ կնիկ առնեմ:

Քեոր ու արջ ասին. Այ ախպէր, մերթար, քե գեործ չկայ խէտ Խէքին, էլ դու չըս կանայ ինոր մօտէն կնիկ առնեւ:

Չէ, կասաւ տղէն: Իլեր չիլեր տերթամ իմ կնիկ առնեմ գեամ: Առջն էլ մազմ կը քեաշի ինորից. կուտայ աղին կասի, որ կերթաս, առ էսա մազ քիւ խետ, թնչ վախտ որ նեղութնի մէջ իւնիս, մազ տուր կրակ՝ ևս շոտմ քեւ կը խասնեմ:

Պղտիկ ախպէր առաւ մազ իզի ինոր չանթի (առպրակ) մէջ ու կնաց: Շատ կնաց, քիչ կնաց Աստուած զիտի, խասաւ գէյլու քէօքը սարէն: Կնաց բաղչէն, վեր յաղպրին նստաւ, թնչ գէյլու կնկան աչք զատուց (հեռուանց) ինկեաւ տղէն, կանչեց ուր խալայեղ ասաց. զնա տես էն ինչ մարդ ի. էկեր նստեր վեր յաղպրին. խաց տար, թըս ուտի, էնի էրթայ, քեանի էն անխոզի գէյլ սարէն չիկեր, որ զեա տեսնա տէնա պրտում-պրտուն:

Խալայեղն ի էկնի կառնի խաց ու պանուման կերթայ մօ էն մարդ. կասի.

Այ խօրօտիկ ջանէլ, խաւք ուր թէվով, օձ ուր պօրտով էսա էրկիր չէր կանա կեա, դու թնչն էկար, առ քեւ խաց-կեր, կն' էլի

կնա, քեանի էն անխոգի գէյլ չիկեր, որ էկաւ՝ քե տեսաւ քեռ ջոչ պըտում քեռ ականջ կը թողնաւ:

Տղէն ի կասի. Տը դու էտըսկնայ պան չասէր, կօ ասիր՝ նէա քեռ խաց կուտեմ, նէա էլ կէրթամ, շում հէվարին գէյլ գայ. խալայեղն էլ կուգեա տուն կըսա կանի, աղչիկն էլ կասայ տո չընի էսա իմ աղպէրներաց մէկն ընի տուց (նրա համար) էսըսկնա պէփարի եա (անվախ) կենի կէրթա մօտ էն մարդ կը տեսնա աղորթ ինոր պզտիկ աղպէրն ի իկեր դա, կը բերա տուն, կը զրուցեն, կը խնդանան վեր իրարու, չիւմ հիրիկուն. քեոր կասի. Աղպէր, քե պախեմ որ գէյլ քե լը տիսնա որ քե տեսաւ էլ Աստուած աղատ էնա, քեորն էլ կը բերի ախպէր կանի մէ խատմ ինձոր կը թալի մնդկի տակ, չիւմ գէյլ կուգեա, կասի. —Եյ կնիկ, մարդ մարդախոս կուգեա էսա տնէն:

Կնիկն էլ կասի. Թեա դու ծուռ ես, սարէն դու կուգեաս, ձորէն դու կուգեաս, մարդ մարդախոս քեյզնէ կուգեա:

Գէյլ կասի. Զէ, կնիկ, կայ չկա մարդախոս կուգեա էսա տնէն:

Կնիկ գէյլուն կասի. Եյ մարդ, պալքի մէ օր իմ ախպէրներաց մէկ էկաւ մօ ձի մըսաֆըր (հիւր), դու թնչիս տանես:

Գէյլն ի կասի. Ձոչ ախպէրդ ընի՞ ջոչ պըտում ականջ տի թողնեմ, միջնեկ գեա՞ խողին խաւասար տանեմ. կօ պստիկ ախպէր գեա՞ իմ գյլսուն, իմ յերեսին պախեմ—շախեմ. չիւմ հօրիսկեմ էրթա:

Աղչիկն ի կասի. Ոլլա, կեօ իմ պստիկ ախպէրն ի իկեր հիստաւ:

Գէյլ կասի. Դէ արի խան տիւսաւ:

Ախպէր կը խանի տիւս, կուրախնան վեր իրարու, կը նստեն սեղան, քէյֆ, ուրախութեն կանեն, կը խարցնեն ախպօր թէ յմւստ կուգեաս, ուր կերթաս:

Էն էլ ուր գյլսու էկած կը պատմի կասի. Հալ-կսէն ըսկնա ի. Խէք իմ կնիկ տարեր ի, ես էլ կէրթամ յիտև:

Խոնոք կասեն. Ախպէր, քեն պան չկա խետ Խէքուն, էլ դու չըս կանա ինորից կնիկ դարցուցե, արի էստեղեր կան արի, որ մէկ աղչիկ որ ուզես՝ մնաք կը բիրենք քե խամար դու մարդախ մանի:

Զէ, կասի պստիկ ախպէր: Ես չիւմ չերթամ իմ կնիկ բիրեմ չեմ դադարի:

Գէյլն էլ կասի. Որ ըտըսկնա ի առ էս իմ մարդի, ինչ վախտ որ տաս կրակ՝ ես քե հազըր եմ. տղէն էլ կառնի մազ, կաց պարով կանեն իրարու ու կը թողնի կերթայ: Շատ կէրթայ, քիչ

կէրթայ կը խասնի խաւքիւ երկիր, կէրթայ կը նստի վէր յաղպ-րին:

Ասաց. Ոլլա, քիչմ տը ոընաթեմ, նոր էրթամ: Խաւքիւ կըն-կան աչք ինչ ինկեաւ տղէն, կանչեց խալայըզին, ասաց. Խաց տար էտա խեղճ մարդ ուստի, էրթայ, քեանի էն անխողի խաւք չիկեր, որ ինոր աչք ինկնի յինի, տէնա մատմատ: Խալայեղ կառնի խաց, կընա մօ էն մարդ կասի. Օձ ուր պորտով, խաւք ուր թէզով խաւքիւ էրկիր կան չի գեար, դու թնչի կըխը-ցար էկար. Էլի, քե խաց կե, թող գնայ քեանի խաւք չիկեր, որ քե տեսաւ, քեոյ կտորներ էրկնուց կը բէրա տակ:

Տղէն կասի. Ոլա ևս տէրթէր, ամա ինչ դու էտըսկնա ասիցիր ևս էլ չըմ էրթար: Խալայեղ կուգեայ խանըմին կըսա կանի. էն էլ կասի. Տօ չէնի թէ էսա իմ ախալէրներաց մէկն էլնի որ էտըսկնայ պէփաքիի ի. կէնի, կէրթայ մօ էն մարդ. կը տեսնայ էնոր պղտիկ ախալէր. Կուրախնան իրարու վրբէն, կը ինդանան, չում յիրի-կուն, քեոր կասի. Ախալէր, էլի քե պախեմ խաւք չը գեայ քե տես-նայ. կէնի ախալէր կը փաթթի եօթ անլըւայ պրթի մէջ, կը պա-խի իտև գուան. ջում խաւք կուգեայ տուն կասի. Էյ կնիկ, մարդ մարգախոտ կուգեայ:

Կնիկ կասի. Սարէն դու կուգեաս, ձորէն դու կուգեաս, մարդ մարգախոտ քեյդնէ կուգեայ:

Խաւք կասի. Զէ, մարդ մարդախոտ կուգեայ:

Կնիկ կասի. Է մարդ, պալքի օրմ իմ ախալէրներաց մէկ էկաւ մօ ձի մէհաման, դու թնչ տանես: Խաւք կասի. Զոչ ախալէր գեայ ջոչ պրտուն ականջ կը թողնեմ. միջնեկ ախալէր գեայ, խողին խա-ւսար կէնեմ, պղտիկ ախալէր գեայ, վըր իմ զլխուն, իրեսին տը պախեմ, չիւմ օրօխկեմ էրթայ:

Կնիկ կասի. Ոլա իմ պղտիկ ախալէր իկեր ի մօ ձի: Խաւք կասի

Ազա հէր ձկնէ կը պախես. կը խանի կը պէրա էն տեղ. կուտեն, խմեն, կուրախնան. ուն սօնդա կը խառցուցեն դեոր կերթաս. կասի. Հալ կըսէն եէք իմ կնիկ տարեր ի, կէրթամ պիրեմ:

Կասեն. Զէ, մերթար, դու չըս կանայ ինորից կնիկ պիրեր: Տղէն կասի. Զէ ինչն էլ տէրթամ, խաւքն էլ կը քեաշի ինոր փառերաց մէկ կտայ ինոր:

Կասի. Էսա ինչ կեախ տաս կրակ ևս քե հազըր եմ. իրար կաց պարով կանեն ու տղէն կը թողնի կէրթայ:

Տղան էնտեղէն կէնի ախըր կէրթայ կէրթայ չում կը խաս-նի մէքու քէօչք ու սարէն: Կէրթա մօ ուր կնիկ, զիրար կը տես-նան, շատ կուրախնան իրարու վրէն: Աղջիկ կասի. Ասծու սի-

բուն եղնի, դու ինչյա էկար խասար հըստեղ, էն զալըմ որ քե տեսաւ՝ քե կանի թութունի պէս (ծխախոտի պէս մանր): Զէ կասա տղէն, ես եկեր եմ քե տի տանեմ: Կը մեայ շում յիրիկուն. աղջիկ կէնի զտղէն եօթ անլուայ բրթի մէջ կը փաթութի ու կը պախի վերին գունչ (անկիւն): Խէք գնացեր էր սար նէժիր, ինչ հէվարին կուգեայ տուն, էլ ձին չը մտներ ներս, ոտքեր կը զանի գետին, ասել կուզի քի մարդ կա տուն. ախըր Խէք զօրով զօրով զձին կը քեաշի գոմ կը կազի, կուգեա կսա մսա կանեն ուրենց, կը պառկեն քյնեն չիւմ լուս, խէտ լուսնալուն Խէք կէնի ձին կը խէժնի ու կըքըշի սար նէժիր (որս), աղէն էլ կէնի կը խէնի ձին կը զեայ ձին յիմաստուն կեղնի. յիմաց կը տայ Խէքին.

Խէք կասի. Կրադ (հրեղէն) խորիւդ, արևուդ կուրպան, ինչ էլաւ Ձին կասի. Ոլլա, Միրզա Մահմատ Էկաւ. ուր կնիկ առց կնաց:

Խէք կասի. Ե՛ ինչյա անենք որ էրթանք խասնենք:
Ձին կասի. Ուտենք, խմենք, նոր էրթանք խասնենք:
Կը նստին կուտեն կը խմեն, կէնեն քյշեն յիտե Միրզա Մահմատին, շատ կը գեան, թիչ կը գեան հասըլի մէ ձորիմ մէջ կը խասնեն ուրենց: Խէք իրեյք գիւ կը կանչի. Ե՛յ Միրզա Մահմատ, էղ կնիկ թալ (ձպիր) գնա, թէ չէ կուգեամ քե կսպանեմ. ֆագաթ (սակայն) էն ականջ չաներ Խէքի խօսքերաց, Խէքն էլ կը խասնի զտղէն կէնա կտոր-կտոր, կը լցա ուր խուրջու մէջ, կը կապա վեր լաճու ձիուն, ու կառնի զինիկ կուգեա. լաճու ձին էլ կուգեա դէմ ու դէմ խաւքիւ տուն, ինոր քեոր շատ կուլայ չում հէվարին խաւք սարէն կուգեա տուն կը տեսնա Միրզա Մահմատի կտորտանք գէօ խուրջու մէջ գէ դա. համան շում մազ կըտա կրտակ, առջ ու գէյլն էլ կուգեան էնտեղ, ինչյա էնենք ինչին չէնենք, մէկ կասա ես կտորտանք տամ, մէկն էլ կասա ես տեղընց տեղ գնինմ, խաւքն էլ կասա ես էլ էրթամ Աղամա դրախտի ջուր բիրեմ քսենք ինոր բրինքտեր ժըրի (վէրքերն լաւանայ) ինչ էն էրկուսն ին կը շարեն, ինչ խաւքն ի՛ կերթա կառնի Աղամա դրախտից ջուր կուգեա, կը տան լաճու ջան, ու փշուրմ էլ կը խմցուցեն, Աստծու խրամանքով լաճ կը ժրի կէնի վեր՝ կասի. Օ՛, ես ինչ անուշ մէր քյներ:

Կասեն: Խա, դու շատ անուշ էր քյներ: Ոլլա Խէք զքե սպաներ էր, պրտեր էր ու կազեր էր վըր քիւ ձիուն, նոր Աստծու խրամանքով մենք քե սաղցուցինք. կասեն, էլ մերթար, արի էս տեղեր կան արի քե խամար մէյ խատ խօրօս աղջիկմ կնդի, քե պատկենյը:

Չէ, կասի տղէն, ոլլա չիւմ ևս էն կնիկ չը պիրեմ չըմ դադարի:

Ե, կասին, որ էտըսկնա ի, կնա, համա մի պիրեր, կնա պախութիր էնտեղ, աղջիկ թող խարցնի խենք ինոր ոժ տեղէն ի, յիմացի ապա կերթանը պիրենյը:

Խա, կասի տղէն, կէնիր կերթա, կերթա կը խասնի մօ աղջիկ, աղջիկ կասի. Վայ, Միրզա Մահմատ, Աստուած քո խիմ չը քեակի, զու ձրտեղէն ընկեար լոս աշխարհք, Ոլլա էն անխողին զբե արեց պրտուճ-պրտուճ, կապեց վեր քեռ ձիուն օրօխկեց:

Տղէն կասի. Աղջի, ես իկերեմ, ամա քե չեմ տանի, յիրի-կուն ինչ Խէք կուգեա, մալուլ կաց—դիր խեռ իմացիր խենյք ինոր ոժ ձրտեղից ի:

Տղէն կէնիր կը պախկուի, չում հէվարին ինչ Խէք կուգեա, ձին էլմ չը մտներ տուն. Էն էլ կը տանի բերի մէյ խատ կէօմիմ կը զանի ձիու յիրեսին կասի. Էն մէկէլ օր զու կասէր Միրզա Մահմատ զիս տուն ի, հէսօր ինչ կայ. չէ զէն շուն շան որդին սպանեցի. համան սկ ջուր կը թալի ձիու աչք, յուշիկմ կը մտնի զեռմ, ինչ Խէք կուգեա աղջիկ կը մալուլի, նէճիր չառներ ձեռնէն:

Խէք կասի. Աղջի, քե ինչ ի իւն, որ չըս խօսի:

Աղջիկ կասի. Ապա զու ձի չըս ասեր խեմ քեռ ոժ մընչ ընչին ի որ զու էն կանգար ոժով ես:

Խէք կասի. Իմ ոժ էնա ձիու մէշն ի, (ձին զեօմի մէջ ոսքեյր կը զանի գեյտին, կը խրխնջա, ասել կուզա քի մարդ կայ տուն, կսա մի էներ) իմ ձին խրեղէն ի, էսօր ջոչ քեռը մէլ կայ էն ութ ոտնէն ա, իմ ձին պստիկ քեռըն ա, ինչ ես ծովուց խանի տիւս մրջմներ թափան իմու. Էն մէ ոս կերան՝ մնաց եօթ ոտնէն, որ մարդ կտրին եղնի քիչմ ոչխրի ջանդակ-մանդակ տանի հըլլնի էն ծովի պէրան մրջմներ ուտեն, չում զէն ձին խանայ չխօմ ութ ոտնէն կէնի տիւս. ինոր կեամն (սանձ) էլ զիս ֆլան քեարի տակ:

Տղէն շատ կուրախնա, կը մնայ չում լոս, Խէք կէնի կէրթա սար նէճիր, աղջէն էլ կէնի կը թողնա կերթա խաւքիւ տուն, մազ կը տայ կրակ՝ առջ ու գէյլն էլ էն սհաթին կուգեան էնտեղ, ինոնց կը պատմի, հալ-կսէն չսրսկնա ի:

Դէյլ կասի. Ոչխար կտրել-սպանել իմ վրէն:

Արջ կասի. Ֆողվել վեր ձի:

Խաւքն էլ կասի. Չում ծովհափ տանել վեր ձի, մէկ օրուա մէջ էնկանդար ջանդակ (կենգանդայ մարմին) կը լիցնեն ծովու մօտ որ պէ խըսապ, աղջէն էլ կերթա քեարի տկից կեամ կը խանի տիւս, կը շարժի մէջ ծովուն, համան խրեղէն ձին փրփրալէն էն

կողմէն կուգեայ, տղէն կեամ կը զանի պէրան կը խէծնի՝ եալա կը քըշի մէկ դիր չիւմ Խէքա քէօշը ու սարէն մէկ կէնա, կառնի զաղչիկ, կը թալի վեր խրեղայ ձիուն ու կը քըշի Խէքա ձին սար կը յիմա կը ձիծդայ:

Խէք կասի. Կրադ, խոգիւղ, արևուդ մեռնիմ, ինչ եղաւ:

Զին կասի. Էն էր ինչ եղաւ, էլ մնչ տեղնի, չէ յերեկ հէվարին քե ասի էն կնկան կսա մի էներ քեռ ոժ, լաճ մեր տուն էր կը լսէր, կսաց իմ ջոչ քեռը առաւ էկաւ աղչիկ տարաւ:

Խէք կասի. Էյ Կրադ, խոգուդ արևուդ մեռնեմ, ուտենք նոր էրթանք խասնենյը, թէ չէ երթանյը ու գեանք նոր ուտենք խմենք:

Զին կասի. Էլ ինչիս էնես չես կանա խասներ:

Խէցն ի կը խէծնի ձին ու կը քեացի, շատ կուգեա, քիչ կուգեա խասնէխաս կեղնի Միրզա Մահմատին, ջոչ ձին կը կանչի Խէքա ձիուն, ուր պստիկ քրոջ, կասի. Աղչի, էտա անխոգին կը թալես գէյտին սպանես, թէ չէ դառնամ քեռ ծամեր կտրեմ, ձին զեւէ չի թալեր, դիրմ էլ կասի էլմ չի թալեր, վեր իրեքին կը թալի գէյտին եօթ ոտնա կը կայնի վեր Խէքայ փորուն, կանի փէտ. կսպանի, Միրզա Մահմատ կը խէծնի մէյ ձին, կնիկն էլ կը խէծնի մէյ ձին, կուգեան չում կը խասնեն ուրենց խօր երկիր, Միրզա Մահմատ կը բերի, եօթ օր եօթ գիշշեր խարսնիս կանի, թաղաղան կը պսակուի, ուրենք կը խասնին ուրենց սրտի մուրագին, դուք էլ, մենյը էլ խասնենյը մեր սրտի մուրագին. իրեյք ինձոր ինկեաւ, մէկ ասողին, մէկ լսողին, մէկն էլ սովորողին:

ԴԻՒՆԵԱ ԳԻՒԶԱԼԻՆ

(ԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՑԻԿԻ)

Վախտով ժամանակով կէլնի չէնե մէյ մարդմ. ունի մէյ կնիկ, էրկու լաճ:

Էտա մարդ խեղճ փուկարայ մարդ էր. ինոր ապրուստ ընչով կանէր, հըմէն օր կէրթէր դաշտ, սար, քեար, ցախ, փէտ կը ժողվէր, կը պիերէր քեազայք կը ծախէր, ուր ապրուստ կանէր:

Մէկ ժամանակմ էտակնայ անելով, լայ-լաճ (վերջառէս) ապրաւ, ասաց. Բօշ պան ի, ևս ցախ, փէտ կրելով իմ քամկի կաշին էթող Տօրսվան կնաց էլաւ. խլզի տան խօստադ. Ժամանակմ մնաց, ասաց. Զանմ, որ ևս խօստադ ըլնեմ, ինչի՞ իմ տան չըմ պանե, իմ քիւլֆաթն (ընտանիք) էլ խեա շախե. իթող իրե ուր տուն, էլմ էլ չվան (պարան) առեց, կնաց սար ցախէ:

Իրիկվան խաւու ձում կնտաւ. առեց էկաւ. Յամբրախ որ կուգեէր՝ մէզեց մէզեց (մտածեց) ասաց. Տօ, ևս էսա ձուն որ տանեմ տուն, մէկ թէ էրկուսն ափ իրիշկան, տեսնան, չըլնե. տանեմ իփեմ, տամ մէկու ձեռ, մէկ տը իրիշկա. չէ ոլլա տը տանեմ քեազայք, զընեմ վէր իմ ջլիյն (տոպրակ) ծախեմ:

Տօրսվան առեց կնաց քեազայք, էստեղ ցախ կը ծախէր. Էն դիմէն ջնուտմ (հրէայ) իրե առջն, ջնուտի աչք ինգեաւ խաւի ձուն, ասաց. Հէյ վախ, ինչին անեմ որ իսոր ձեռնեն էսա խաւու ձուն խանեմ: Էտա մարդ կիտի որ դորդվան (իրաւ որ) խաւու ձու. ի. Էն չկիտան թէ էտա ձուն ինչ թանգ զատ իւ:

Զնուու մէզեց (մտածեց) ասաց յինքն իրան. որ էսա տեղ ըլնեմ զյուղ, խալզ աը գեա վէր ձի թանգեացուցի, չըլնե, չէ, ոլլա, թօնեմ էսա ցախ ծախողին թօ էրթայ խալվաթ (պարապ) փողանմ, նոր էրթամ եախէն (օձիք) պընեմ, պալքի էժան պըռն ցեսնեմ, տանեմ:

Էն խեղճ ցախ ծախող ցախս, ցախ, ցախս կանչելով կնաց մտաւ նեղ փօղանմ: Հէտիկմ ջնուտ հիտևանց վազեց ինոր իսե, վազեց տոջն պընեց, ասաց. Էյ բարեկամ, էտա լինչ ի որ կը ծախեմ:

—Ասաց. Տօ կը տեսնաս որ ցախ ի կը ծախեմ:

Ե՞յ ասաց, ապա էտա Բնչ ձուի ի, չըս ծախեն:

— Ան, ասաց, կը ծախեմ:

Զհուտ ասաց. Խալիւր (ծերունի), էտա ձուի գին Բնչ ի:

Ասաց. Տիւ կիտես, ինչ կտաս տուր, ևս մէկ ձուի խամար պազմը տը անեմ:

Զհուտ ասաց. Խալիւր, քեյ խազար դուրսոց կտամ, կը տմա:

— Ե՞յ, ասաց Խալիւր, առ ձուի գին Բնչ ի էն տու, իս ես քեռ թռանէն (ծաղրածուն) չեմ. ես կիտեմ որ իմ ձուի գին Բնչ ի, խենյը քեանի խազար ոսկի ի. չգիտէր որ խալիւրու միտք եան էրկու փարայ ի, եան խինդ փարայ:

Զհուտ կասի. Թեռ ձվին էրկու խազար դուրսոց կըտամ, կը տմա:

Ելմ էլ խալիւր կասի. Տօ տէ թռանայ (ծաղրել) մի անե, իմ ձվի գին ինչ ի, էն ասա:

Զհուտ կիտի թէ, հալա խալիւր հաւել գին կուզի. դայի (որ թէ) խօսք չիտայ. նաչար վրէն կը կտրի կասի. Թեյ երեսուն ոսկի կտամ:

Էսա տրուս խալիւր կը հերսոտի (կը բարկանայ) կասի. Տօ չը տուղի խէրն անիծեմ. տէ տուր:

Զհուտն ի համան երեսուն ոսկին մէկուց կը խամբրի, խալիւրու ձեռնէն կառնի ձուն համան կը փախնի էրթայ: Խալիւրն էլ կառնի երեսուն ոսկին ուրախ ուրախ կը փախնի դեխ ուր տուն, կասի. Հա, Զհուտի խէրն անիծած ըլնի, ուլա էնիկ ծուռն էր (յիմար), խապեցի, երեսուն ոսկին առա: Խէն (մարզը) էկաւ տուն, ասաց. Տօ կնիկ, վաստկայ որ վաստկայ, եահուտու խէր անիծեցի, մէկ ձու տվի երեսուն ոսկի:

Մարդն էր էտա փողով իր խաց, կերակուր հըմէն պան կառնէր ու կուտէր ուրհաթ (հանգիստ). ըստրուս հըմէն օր մէկ մէկ ձու կը տանէր մօտ եահուտին, կտէր երեսուն, քեառսուն ոսկի կառնէր կը պիրէր:

Օրմ էլ խէն (մարդ) ուր ձվի գին էխան եօթանասուն, ութսուն ոսկի:

Օրմ էլ ասաց. Տօ խէրիք ի ես էրթամ դաշտից օրէ օր ձվիրեմ ծախեմ. էրթամ փէտատ (բըրիչ) տանեմ էն խաւքիւ պէռնի յառջն փորեմ, մտնեմ ինչ, պոնեմ պիրեմ, հա թող մեր տուն ածի, ածի. պալքի (իցէ թէ) վաղ էթող էնտեղից կնաց:

Առեց փէտատ, կնաց խաւքի պէռնի յառջն փորեց, փորեց, փորեց յախմախ էթալ դէն, մտաւ մէջ, խաւք իրե կպաւ վըր ձվիրաց, հէտիկմ խալիւր ձեռ էթալ պոչ պանեց, տոնց իսկ տուն պէռն (բոյն) շինեց ինոր խամար, խաւքն իտի մէջ, Կիշեր ցերեկ:

խաւք ածեց, ինչն (մարդ) տարաւ ծախեց ջնուտին եօթանասուն ոսկի, ինչն (մարդ) զալոմմ զանգնցաւ. (խիստ հարստացաւ,) որ զալոմմ զանգնցաւ, բըռմ (շատմ) խարապա տուն-մուն զյնեց, արաց ուր խամար քեզկ սարայ, ապրեց էնսեղ:

Ազագ քենառուն յիսուն գավա (ուզա) զյնեց, էլաւ թիւմար (վլանառական):

Ասաց. Այ կնիկ, ես ուս կէրթամ պազըրզյնութեն, տիւ էսս խաւքիւ ձուն հըմէն օր տար մօ ջնուտ, եէթմիշ (եօթանասուն) ոսկի առ պեւ:

Ենիկ ասաց. Ան, ես կը տանեմ, կը չախեմ, տիւ կնա, Աստուած քեն պան աջողի:

Աֆանզըմ, մարդն էր կնաց քեաղքիյ մէջ ուր թուջըռութնի չուլշվան առեց. մշակ պանեց, վէր հասըլի (վերջապէս) ինչ որ ովէտք էր զնեց. ուր քեռներ կայիմմ կապեց, քշեց իրե տուն մօ ուր կնիկ, հարց ու փորձ արեց ձվի խամար:

Ասաց. Ենիկ, ձուն կը տանես մօ հաճուտին, քեն եէթմիշ ոսկին կառնես կուզեաւ:

Աղէկ, ասաց կնիկ:

Ինչ մարդ-բազրդեան էր ինզեաւ աշխար կան գեալ, կնիկ հըմէն օր ձուն կը տանէր մօ ջնուտ՝ ուր եէթմիշ ոսկին կառնէր կուզեէր:

Էրկու իրեք տարի էսովէս անցաւ, մնաց որ ջնուտ ասաց. Տօ ինչիք թատպիրմ (պատրաստութիւն) չանեմ խեա էսա կնկան, հըմէն օր, հըմէն օր եէթմիշ ոսկի տալ շատ կօլայի պան չի: Զը-հուտն էր էլաւ կնաց. Էն կնկա տան քեամակ մէ պառաւմ կէր, կնաց ինոր մօտ, ասաց. Պառաւ, կանան մէ թատպիրմ անես էնա կնկան գեա խետ իմ ձեռաց. քե իրեք քեաշ քեն կշռանքոյվ ոսկի կուտամ:

Պառաւ ասաց. Ան, ես կը կատարեմ:

Պառաւն էր էլաւ քեառուն զյլօխ չորթան շարեց. կախեց ուր վէկն. իրե իրե էն կնկայ տան զուռ կայնաւ, ասաց. Ատթհն, խաթուն, խնդրեմ ձիկ մէ տեղմ տու, էսա զիյշեր մնամ ըստեզ, ասաւուն թօզնեմ էրթամ:

Պառաւ նստաւ էտ տեղ չիւմ իրիկուն ասաց. Իմ ընկերներ ուր էրթան հաջ, ես ես մնացի:

Իրիկուն որ էլաւ, ասաց. Ատթուն, քեն իրիկ ինչին ի էլե, դեմք ի կնացի:

Կնիկ ասաց. Իմ էրիկ կնացե պազըրզյնութեն. Խօ էրկու էրիկ չըմ անի. մէկ էրիկ ունեմ, էն էլ կնացե աշխար կան գեալ — թու վայ, խաթհն, ապա տիւ ան իրիկ ինչին կանես մէնակ:

Կնիկ ասաց. Ապա ինչին անեմ:

Պառաւն էր ասաց. Տօ տնաւելը, աշխար եար պռնել կայ (սիրեկան ունենաւ), քէֆ անել կայ, պան կայ:

Պառաւ շաբաթմ մնաց կնկան մօտ. հարևէ էխան (ճամբից շեղեց). ասաց. Տնաշէն, էրիկ ուր տեղ, եար ուր տեղ, եարոն պան բաշկա (ուրիշ) ի, եար լազաթով կըլինի:

Կնիկ կակղաւ, ասաց. Դէ եարմ էլ ձիկ խամար կնդիր:

Էլ լաւ, ասաց պառաւ, էսօր արի մեր տան քամակ, մէ զանգին (հարուստ) ջնուռմ կայ, պիրեմ անեմ քեյ եար, խետ քէյֆ արաւ:

Էլան ձուն առին, կնացին շուկէն ծախելու. Էն ջնուռ էլմ էլ էկաւ ձուն զնեց: Պառաւ ասաց. Աղէկ իրեշկա խորը. հան էսա ի իմ ասած մարդ. իսկե էրկսի խօսքեր արաց մէկ. պառաւ էթող կնաց. ուր էրկու խարիր ոսկին առեց, կնաց տուն:

Դօրսվան կնիկն էր, էն մէկէլ որ կնիկ ուր խօրում սազ խոռու, կնաց մօ ջնուռ: Ջնուռ փարէն խոռ ձուն առեց, էլ կանի չանն խետ ինոր եար դէյի (որպէս սիրեկան) չը զրուցե. կնիկն էր էթող մառլթ (տրառամ) լալելէն իրե ուր տուն. կիտցաւ որ ջնուռ եար դէյի (որպէս սիրեկան) էլ չը զրուցե:

Ջնուռ էլաւ կնաց մօ պառաւ ասաց. Պառաւ, էսօր ես խէտ ինոր չըմ զրուցե. Էլի կնա մհանէն (պատճառ) արա մէ խզմաթմ չխօ էն քեյ կասի, տիւ էլ ինոր ասա. Արի ես քեյ տանեմ մեր տուն, ձե էրկսին բարիշցուցեմ. (հաշտեցնեմ) առ արե:

Պառաւ էլաւ, քեց կնաց կնկայ տուն: Կնիկ ասաց. Պառաւ, ինէր ընի, ընչի՞ ես իկե:

— Ռլա, խաթուն. Էկա էնա տեղ մէ խզմաթի, ասի էրթամ մէկ էլ խաթուն տեսնամ, խենյք ինչին ի ինոր հալ, քէյֆ:

Կնիկ ու պառաւ կնացին տուն նստան, պառաւ ասաց. Խաթուն, տիւք էլմ էլ սկսն սէր էք խետ եահուտուն, ինչին էք, ինչին չէք:

Կնիկ ասաց. Էլ մի խարցուցե. հերէկ կնացի մեռա, պատռա, իւրտ ձի չը զրուցաւ Խօրօս պանմ խանեցիր իմ գյլօխտ:

Պառաւ ասաց. Խաթուն, տիւ մառախ (մի մտածիր) մի անե, վաղ առաւտուն արի մօ ձի, ես տիւ մէյ տեղ կէրթանյք, ես ինոր արև կը կտրեմ:

Կնիկն էր առաւտուն էլաւ կնաց պառվումօտ, մէ լաւմ սիւս (պնուցեց) էլաւ, կնաց պառվու տուն: Պառաւ ասաց. Խաթուն, էկմբը:

Ասաց. Խա, էկաւ:

— Արի, նստի ստա, ես էրթամ տիւս զեամ:

Աղջկ,

Կնիկ նատաւ պառվու տուն, պառաւ շում վագեց մօ ջնուսու ջնուս ասաց. Պառաւ, էլմ ինչի՞ էկար մէնակ:

Ասաց. Կնիկ զեօ իկեր ի մեր տուն, ևս ինոր մէնակ կորսիկիմ զես քեռ մօտ, ձուն առ. ամա էլմ էլ մի զրուցն խնտ, շիւմ ևս կը զամ ինոր խնտ. պալքի քաղցրացուցենք, էն խաւք ինչ ձու կածի, ձեռնէն առնենյք:

Պառաւ էթող էկաւ ուր տուն, ասաց կնկան. Տիւ էլմ էլ էլի բիւա (առանց) ձի կնա, խնչյք ինչ կասի, նոր ևս կը զեսմ:

Կնիկն էր էլաւ մէնակ կնաց, ձուն տարաւ, էլմ էլ եանուտին քիթ-մոթով ձուն առեց, խսկի քեաղցր զրոյց չարեց կնկա խնտ:

Կնիկ արտում, տիտոր լալով էկաւ պառվու մօտ, էզածը պատմեց. Պառաւն էլ էլաւ կնիկն առեց կնաց ջնուսի մօտ ինոր տուն. Ասաց. Զե էլմ էլ ինչ էլաւ, եար ըստկնայ կէնսի, եար տի մէրով ընի. ձի ինչ էլաւ, մը չար աչք դիսաւ ձեւ:

Եանուտին ասաց. Զըմ կիսեն. որ էն (կնիկ) կեղծաւոր չի, ուր տան խաւք ար զինի (զանէ), ինոր սիրաւ, ովուսիկներ (երիկաւմունք) պիրի ևս ուտենմ, որ ևս կիսանամ զեօ էն ձի կը սիրի:

Կնիկն ասաց. Թայլա (երանի է) տիւ ձի սիրի, ևս էն խաւք կուրպան կանեմ քե, կը մորթեմ, կը պիրեմ տիւ ուտեն:

Պառաւ էթող էկաւ ուր տուն:

Կնիկն էր էլաւ էկաւ քեաղայք, ճամբախ մէղեց մէղեց (մտածեց) ինչ ար անի, ասաց. Էրթամ քեաղայք իմ խաւքիւ ցեղ խաւքմ առնեմ պիրեմ սազ սազ, թօզ զինի ուտիւ էլաւ փարէն առեց ընկաւ քեաղի մէջ, ըստեն էնտեն (այս այն կողմ) կնաց, ապա ուր խաւքու պէս խաւքմ հաստատ առեց, դարձաւ էկաւ տուն, պանեց ուր այլօր (աքաղաղ) զինեց, զյլօխ, սիրաւ իփիեց, առեց կնաց ջնուտին: Ջնուտ խնա առեց խոտ արաց, աըփեց զեյտին, ասաց. Հայ սաշի փուչուխ (կիսածամ) անառակ, ևս չըմ կիտե քես կեղծաւորութեն, ևս չըմ ճանչնա որ էսս այլօրի զյլօխ ի. առ կնա, ևս խե քեյ չեմ զրուցե, զիրմ էլ չը զեսա, իմ հէրս (բարկութիւն) որ էլաւ, քեյ փարափառչայ կանեմ, կեղծ պան չըմ ուղի:

Կնիկ էկաւ տուն ասաց. Էսա էլաւ. Էսա խաւքն առնեմ էրթամ որ չիմնայ: Էլաւ խաւքիւ տեղ կազըմ (սագ) առեց, զյլօխ սիրաւ իփիեց, տարաւ մօ եանուտին: Եանուտին էլմ էլ խոտ արաց, ասաց. Հայ հայ, անիրաւ, ոռոսալի (անիրաւ, անտոռակ), դօրիս կազ ևս պիրեն որ չիմնամ:

Կնիկ էլմ էլ լալով էկաւ տուն: Առաւտուն էլաւ, էլ ճար

չկէր. հէտիկմ դանակ առեց, էն լաւ խաւքիւ վիզ կտրեց. ոյլօխ, սիրտն արաց քեապապ (խորոված) իտի վըը ջվլին, մտաւ հողէն ուր թազա (նոր) խալիներ տը խայնէր էրթէր. ինոր էն ջուխտ (գոյգ) լաճեր մտան տուն, կանչեցին. Մարէ, մարէ, մենյը անօթի ենք. Դեռ որ կիրիշկան՝ մարէ չըկայ, ըստեխ էնդեխ կան էկան՝ մէր չըկայ. էկան տեսան որ գետ ջվլի վրէն սինու (մատուցարան) մէջ էրկու կտոր քեապապ տեսան. համան զյլօխ ճոչ լան առեց, սիրտ պատիկ լաճ, կերան, պէրաններ սրբին, էլան տիւտ:

Կնիկն նոր տիւտ էկաւ, տեսաւ որ էլ քեապապ չկայ. էլմ էլ էլաւ խաւքմ էլ զինեց, առեց կնաց, խետ որ իտի ջնոտու առջն. ջնուտ համան տփեց գեյտին ասաց. Հայ գեյտի ոռոսպի, ևս քեռ խարելայ ծաղիկն եմ. էլի ըստեղից շոտ կնա, թէ չէ քեյ մկա կը սատկըցուցեմ:

Կնիկն էլ իլաց, ասաց. Խնչ պախեմ քեյզնէ, քեռ Աստծուց. իմ ջուխտ լաճեր անօթի կիւած ին տուն, չիւմ որ ևս իմ խալւներ խաղեա, հօտից տիւտ էկայ, ինոնք կիրերին, պան չէր մնացե որ պիրէ քեյ:

—Էյ ասաց եահուտին. ըսկուն պան ևս չըմ կիւտե. էն զյլօխն էլ, սիրտն էլ մըջ մարդու փորին չըն խալե. կնա, շոտ քեռ էրկու լաճ զինի, խան պե, ևս ուտեմ որ խըտ քեյ զրուցեմ, քեյ սիրեմ, անեմ իմ եար:

Կնիկն էր էլաւ, լալով սդով էկաւ տուն, ասաց. Բօշ ի, իմ լաճեր զինեմ չընե, չը զինեմ չընե, ինչիս անեմ, ինչիս չանեմ, էլմ էրթամ մօ էն պառաւ. ասեմ ինոր, թէ ճարմ անես, էլմ էլ տիւտ անես:

Կնիկն էր էլաւ էլմ էլ ուր ճար թալեց մօ պառաւ, ասաց. Թէ ճարմ անես՝ տիւտ անես, իմ լաճեր էն խաւքիւ զյլօխն ու սիրտ ձինէ գեախտիկ կէրան. եահուտին մկայ կասի տիւ քեռ լաճեր որ մորթես, ինոնց փորից խանես. պիրես ևս ուտեմ, չընու չընե, էլ քեյ չըմ սիրե. տիւ քեռ Աստուած կը սիրես պառվիկ, մէ թատ-պիրմ արաւ:

Պառաւ էլաւ կնաց մօ եահուտին գեանգեատ, ասաց. Տիւ էսա ինչ ի որ կանես, ձի մըջ աշխրին արիր խաղք-խայտառակ, ախըր սկընայ սէր, եար չընեն:

Եահուտին ասաց. Պառաւ, մկայ տիւ ինչ կասես, չիւմ էն ուր էրկու լաճ չը զինի, ինոնց փորից խաւքիւ զյլօխ ու սիրտ չը խանի պիրի ևս ուտեմ, իմ սիրտ չը խօմնայ, ևս թիւչար (երբէք) ինոր խետ էլ չըմ զրուցե:

Պառաւ էկաւ եահուտու ասած պատմեց կնկան. ասաց հալ էլքեաթ ըսկնայ ի. էլ տիւ կիւտես. կնա քեռ լաճեր զինի, եահուտու խօսք՝ խօսք ի:

Կնիկ էր էլաւ զանակ վերցրուց, խետ կը սըրի խետ կուլայ. բաներ տիւռ կը խաղէն, խան որ ուրենց անէն լալու ձէն կը դեա. նոչ լաճ ասաց. Տօ մէ սուռ կաց, մեր անէն լալու ձէն կուգեա:

Ջնիկ կտրեցին, ականչ արին, էկան տեսան որ գե մէր նստե, զանակ կը սըրի, խետ կը սըրի, խետ կուլայ, կասի. Տօ ևաման, մատաթի, ես իմ լաճեր ինչի տը զինեմ:

Լաճեր համան որ լսան մօր ասածներ, թօղին էնդուց փախան, մէկ մէկու ձեռք պանցեցին, տնից կնացին: Փախան, շատ քիչչ կնացին, մէյ երկիրմ էլան տիւռ, էնտեղ քեաղքիյմ ռաստ էկան: Էն քեաղքիյմ միլլաթ (ժողովուրդը) գե մէյ տեղ ժողովված րաց տեղմ. ինոնց քեաղքի թագաւոր որ մեռեր ի դաւլաթ կուշի կը թալեն, վըր վիր զյլխուն որ թառաւ կուշ, էնի կանեն ուրենց թագաւոր:

Դօվլաթ կուշին թալին (ձպին) էկաւ թառաւ վէր ջոջ լաճու զյլխուն. խառան զարկին մըջ լաճու զյլխուն, ասին. Տօ, տիւ մն բալմ իր, էկար ըստեղ:

Լաճն էր ասաց. Տօ, մայար (միթէ) ես ձեր խաւքին խասրանթ ի, ես չըմ ուզի:

Լաճուն տարան մացուցին մըջ տանոմ. էլմ էլ կուշ որ թալին, թառաւ էկաւ, թառաւ էլմ էլ կնաց կան իրե. կան իրե. փէնչ չտրից ներս մտաւ էլմ էլ իրե թառաւ վըր լաճու զյլխուն իջաւ:

Էն երկրի խալիւրը մարդեր ասին. Տօ, պալքի թէ Աստուած իտոնց ի օրօնկն մն թագաւոր: Պիրին արին ուրենց թագաւոր. զիմ զեխից եկան շնորհաւորեցին:

Տղէն էր որ էլաւ թագաւոր, էտա զըռւն (այդ ժամանակ) ուր պսափ ախտէր կուրիսաւ, կնաց կայնաւ մէ աշչու (խոնարիքի) տիւռ, չիւմ իրիկուն կայնաւ դա. իրեկուն որ էլաւ, աշչին ասաց. Այ տղա, մուլին ընդհաւ, արի կնա, դարզյիներ կը զանեն էլ չըս կանա էրթա:

Տղէն ասաց. Խեմը էրթամ, ես տեղ չունեմ որ էրթամ:

Ասաց. կաց ըստեղ չիւմ առաւտուն տեսնանյը:

Լաճ մնաց աշչու մօտ, էլաւ չրադ. ըսկուն մէ լաւ լաւ կերակուր կեփէր, լազաթուն որ կերող կը կշտանար: Էն էլ էնպէս խօրօս էր, որ աշխար թափեր էր ինոր խօրօտկութեն թամաշա անելու: ինոր իփած կերակուրի անուշութեն ուտելու:

Աշչին ասաց. Տղա, կաց մօ ձիկ չրադ:

Տղէն մնաց էն տեղ. քյնաւ, առաւտուն որ վիր կացաւ, ուր տեղաշորեր վիրցուց, տեսան որ խինդ խարիք զուրուշ փարա գե լաճու զյլխու տակ. զարմացան. ուսթէն ասաց. Խեղճ տղէն, տիսնաս մը տեղից ի վաստկե. փարէն առեց էթալ պատուխան էն

մէկէլ օր էլմ էլ սկուն, ոյ ասաց. աւազա էլի ականատից (պատուհանից) կնդե. էլմ էլ պիրե, դրե ուր պառցի (բարձի) տակ, էլ մէլ ուսթէն էն փարէն առեց իթալ ականատ:

Էն մէկէլ օր լաճն ասաց. Տօ խէրիք չէլաւ, որ իմ ուսթէն իմ տեղջուզ իսկի, վերցուցի, ես ուր թալեմ (ձգեմ): Էլաւ տեղ էթալ, պառկաւ քյնաւ, առաւտուն էլաւ վեր, տեղ վերուց, տեսաւ որ խինդ խարիբ դուրուց զես ուր գյլիի տակ դրած. ոտ, ասաց. էսա ուսթէն ձի կը ջոպի (կը փորձէ), խեմ ես գեղողութեն կանեմ, էլաւ փարէն առեց պլնթրկեց պատուխան: Էն մէկէլ օր էլմ էլ սկոն, ասաց. Զէ, էսա էն խաւքիւ հունարն ի, վաղ որ ինոր սիրտ ուտէր, ոսկի կը ծլէր պառցի տակ. վաղ որ գյլօխ ուտէր՝ ուր էլ-նէր թագաւորւ:

Դօրիսկան տեսնանյը թէ էտա քեաղայքն էլ ինչ օրէնյը կէր:

Էն քեաղայք աղջիկմ կէր՝ անուն Դիւնեա-Գիւլջալի. ուր ճկոթ փէնջարից կըխանէր տիււ, հըմէն մէկ տեսնելուն մէկ ոսկի կառնէր: Լաճն էր ելաւ կնաց էն աղջկայ հօտի փէնջարի տակ տունմ քյրայեց (վարձեց) նստաւ էն տեղ. օր խինդ ոսկի որ ուր պառցի տակ կըլնէր՝ չորս կըտէր աղջկան, օր չորս դան (անդամ) ինոր թամաշա կանէր, մէկ ոսկին էլ կուտէր:

Մէ ժամանակմ էտակընա քեաղայք. էտև Դիւնեա-Գիւլջալին ասաց. Տօ ջանըմ, էսա տղին խապինայ որ էնէր, մկայ խըլըսնը էր, էսա լինչ ի որ կտա կտա խլմում չըկայ:

Կանչեց ուր կարավաշնէր (աղախին) իսկե, ասաց. Աղէկ աչկէյք, խննյը էդա գարբ-քար մարդ չկմի: Ասաց. Դէ կնացէյք էն ջանէլ մարդ կանչէյք թօ գեա տեսնամ: Կնացին կանչեցին:

Օ՛խ, ասաց, ես օր չորս ոսկի կտի, նոր կըտեսնի ինոր ճկոթ, մկա էնա ինչյք կըկանչի, արի էրթամ, տեսնամ ինչ կայ, ինչ կասի: Էլաւ կնաց մօտ Դիւնեա-Գիւլջալին, ասաց. Պարկք:

Ա՛յ, ասաց, Աստծու պարին, խօրօս լաճ. նստի ըստեղ մէ քիյչ զրուց անենյը:

Խոննյք նստան. Էրկոււ մէյ տեղ, շատ քեյչ զրուց արին, ապա ասաց Դիւնեա-Գիւլջալին. Մէ ասա տեսնամ տիւ լինչ մարդ ես, յուստ կուգեաս, տեսր կէրթաս, ինչ կանեա:

Լաճն ասաց. Ես ինչ ուր անեմ, ես բազրոյնիմ լաճ եմ, ձի մէ աղպէր էլ կէր, ես էն աղպէր էլանյը, էկանյք ֆռալու, ինչ իմ մեծ աղպէրն էր՝ էլաւ քեաղքիյմ թագաւոր, ինչ եւ էկա էլա ստեղ աշխու չըադ:

Է՛, ասաց Դիւնեա-Գիւլջալին, տղմ, տիւ ձի չը՞ս առնէ:

Խա, ասաց, որ տիւ ձի կըխաւննս կտոնես, ես չխօ լաւա (աղաչանք) կանեմ:

Դիւնեա-Դիւզալին էր ամբ արաց (հրամայեց) ուր խալանեղներաց, ասաց. Ելէյք սեղան պատրաստէյք, նստենյք ուտենյք, խմենյք, քէյք անենյք, ևս էսա լան ոը առնեմ: Գեաղտիկը ասաց ուր խալայնդներաց, պիրէյք եօթ տարւայ գիյնին, պիրէյք կապէյք խոր վրէն: Պիրին եօթ տարւայ գիյնին կապեցին վրը լաճուն, խօրօդմ սարիսօցցուցին (արքեցը ին). ապա նստան խորց ու փորձ արին:

Տղէն էլ ուր զյլխու դացած զըմէն պատմեց. թէ, ինչին խաւքիւ սիրա կիրիւ, ուր զյլխու տակ ոսկի ի իլէ հըմէն դիյշեր. ուր տխոզէրն էլ խաւքիւ զյլխուն ի կիրիւ իլի թագաւոր: Աղջիկն էլ էւլաւ գեղմ խոռու, լաճ որ կէրաւ, բօղզից փսխանց, էսա խաւքիւ սիրտ էկաւ ինցիսու: Աղջիկն էլ համա խասաւ լըվաց, էթալ ուր պէրան ասաց. Դորիս իսոր զէ թալէյք (ձգէք) տիւսւ: Էլան աղի ոտքեյր ձեռքեյր պանիցին, թըխիթըլսկալէն քեաշիցին, տարան թարանջից (սանուսուից) կլորիցին տակ, էրկու դէօմը (բռունցք) էլ տփիցին մէջ զյլխուն, զուռ շինեցին վէր զյլխուն, մտան տուն:

Լաճն էր՝ որ առաւտուն ակիսաւ, վեր կացաւ տեսաւ որ ուր համ շնոր փարիշան ի (վատանգաւոր), կտուտած, շփուտած, կույսու ցուստ հալի մէջ իւ Ասաց՝ էսա չէլաւ, ստեղ էլ ձի խաց չկայ, էթող, կնաց թարկ-զիւնեա (աշխարհաթող) արեց, էլաւ կնաց:

Կնաց կնաց, շատ թէ քիյչ Աստւած կիտի, կնաց մէ ուրիշ երկիրմ էլաւ տիւսւ: Մէ մարդմ ասստ իրե ինոր ասաց. Տղա, կէլ-նիս մօտ ձիկ աշկերտաւ:

Ասաց. Խա, ինչի՞ չեմ ըլնեւ: Մէկ էրկու տարի վարձոց մնաց էսա տեղ:

Էղա մարդն էր օրմ ասաց. Տղա, էսօր կնաց սար ցախ պե վասենյք: Լաճն էլ կնաց սար. էտա տեղ մէյ խաւտ պազդուն թասմ կնուտաւ: Օ՛խ, ասաց, պսպղուն թասմ կնդա, տանիմ իսորով ջուր խմեմ: Ցախ ժողվեց, շարկեց, առեց էկաւ մօ յաղպիւրմ, ուղեց էղա տեղ ջուր խմել: Ինչ թաս իզար աղրիւր, իլեց ոը խմէր տեսաւ քյասուն (լիք) ոսկի, մէկէլ իլեց. էլմէլ հլին ոսկի էլաւ. առեց թաս կնաց տաճն. ուր աղին ասաց. Աղա, ևս էլ չըմ կանայ մես քեռ մօտ. ևս ուր էրթամ խմետ եմ խացին:

Տղէն էլաւ կնաց էլմ էլ կնաց էն քեազայք. էն առջւս տուն քյացայեց նստաւ: Էլմ էլ որ չորս ոսկի կտէր. չորս դան աղջկայ ճկոթ կըտեսնէր, ուր խաւտս կըխանէր:

Դիւնեա-Դիւզալին էր ասաց՝ ինչ որ խզինա ըլնէր, մկա խլսէր էր, մէ կանչէյք թօ գեա, տեսնամ էս ինչ մարդ ի: Էկան լաճուն կանչեցին, ասին. Արի, Դիւնեա-Դիւզալին քեյ կուզի: Տղէն էլաւ, ուրախ ուրախ կնաց. գէլ (գեռ) աղջիկ աղին չէր տեսն, ոյ,

ասաց աղջիկ, Միրզա-Մահմատ, քեռ արևուն մեռնեմ, տիւ գեոր իր չիւմ էսօբ:

Ասաց. Ես կնացեր ի էնա երկիր փարա վաստկելու:

Ոյտիւ պարով էկար, խազար պարով էլմ էլ ամը արաց խալայեղներաց, սեղան պատրաստին նստան, քէյֆ արին. էլմ էլ թիրին եօթ տարվա գիյնին կապեցին վըր տղին, սարխոցցուցին, խարց փորձ արաց աղջիկ, ասաց. Տօ խօրոդ լաճ, տիւ էդա կանտար փարէն որ տեղից վաստկար:

Տղէն ասաց. Ես ըստեղից որ կնացի, կնացի սարցախէ. Էնտեղ թասմ կընդա. Էն թաս եփ կը զանի յաղախիւր, հիլին ոսկի կը լցւէր:

Էնա խապար որ լսան, համան գէօմիմ զարկին մէջ տղի զմլսուն. թասն առան ձեռնից, տնից խանին տիւս, թալին փօղան, զուռ շինին վրէն:

Տղէն՝ որ աեղամիշ էլաւ(սթափուեց) տեսաւ ուր հալ քէյֆիաթ. էլմ էլ թարկ տիւնեա արեց էլաւ կնաց. խասաւ համբխի կէս: Էնտեղ տեսաւ իրեյք մարդ մէկ մէկու կը տփին, կովելէն զօղրի կուգեին դեխ ինք, ասաց. Տօ ընչի՞ կը կովէյք: Ասին. Տօ մենյը իրեյք ախալէր ենք. մեր ապրանյք պիթուն պաժնացինյք, մաց իրեյք խատ պան. մէկ սըռ-քիւլախ ի (գաղտնագլխարկ), որ վճկ դնի՞ էլ մարդ ինոր չտեսնայ. մէկ խալի (գորգ) որ նստես վրէն ասես, ձի տար էնա ֆիլան (այսինչ) տեղ, ալ բէ ալ (ձեռաց) կըտանի. մէկ էլ սուֆրէմ (տփուոց) որ պանաս վարոցմ զանես վրէն՝ ինչ չէյշիտ (տեսակ) կեր ասես, հազըր կուգեա առջնդ կուտես: Դէ արի էրթանյք հիւքմաթ (դատարան) մեր դաւին (դատը) կտրի:

Տղէն ասաց. Այ տնաշէններ, պիթէյք ես ձե խմմար ձեր դասին կտրեմ, կիսեմ տամ ձե:

—Դէ, ասին, արի կիսի ինենյք:

Տղէն էր էգա պաններ առեց կայնաւ զատ տեղմ ասաց. Ես ինչ տըտամ ձե. տիւք էլ էն կապուլ արէք (ընդունէք):

Խա, ասին, դէ կիսի:

Ասաց. Զատ (հեռու) կայնէք:

Զատ կայնան: Տղէն մէյ դիր սըռ-քիւլախին զրեց ուր զյլօխ կորսըւաւ, էլ ինոնք չտիսան, տոեց փախաւ. էկաւ նստաւ վըր խալուն (գորգին) ասաց. Տար ձիկ Դիւնեա-Դիւզալու քեօշկ խան: Տղէն կնաց Դիւնեա-Դիւզալու քեօշը նստաւ, Հմէն օր Դիւնեա-Դիւզալուն որ խաց կը պիթէն՝ էն խաց կըլսընէք. Դիւնեա-Դիւզալին կը մնէր անօթի: Էսով դընա (սրանից յետոյ) օր իրեյք չորս խաց

հաւել կը բերէն, էն կմնէր անօթի: «Տյ, կասին, Դիւնեա-Դիւղալին դացն շատակեր»:

Օրմ էրկու, բարսկնայ մնաց. Դիւնեա-Դիւղալին նստէր էր կը մեղէր (կը մտածէր). տիսաւ որ ուր փառչ իրեն իրեն, էլաւ կըլ-կըլ-կըլ. Ոյ, ասաց, մարդ կայ ևմ հօտէն, դուռ շինէյք: Դուռ շինցին: Ասաց. Էյ մարդ, ախ վմզ ես, ելի ախս, Աստւած ձի իտուքե, քե ձիկ: Աղջիկ խնտ ասաց չասաց, համան Միրդա-Մահմատ սըռ-քիւրախին վերուց զյլխուց, ախս էլաւ:

Աղջիկ ասաց. ոյ Աստւած քեռ խիմ (հիմ) չքեակի, էն օրվե ինչ տիւ կնացեր ես, ես լալով, արտսումնը թափելով մեռաւ: Ամբ արաց խալակղներաց ասաց. Դէ էլէյք սեղան գրէյք, էսօրն ի էսօր մենք տի շատ ուրախութեն անենյք, ապս էրթանյք պսակւենյք:

Էլան շուտով սեղան գրին. խաց պարէն պատրաստին, էլմ էլ եօթ տարգայ զիյնին կապիցին վրէն, էն մեռած ընդեաւ էնտեղ, սըռ-քիւրախին ասին վերնից, էրկու գեօմր էլ պըռուեցին մէջ զյլխուն, թալին տիւս:

Լաճու խելք իրեն վրէն, ասաց. Էյ վախ, ես չէ ինչին անեմ:

Տիրմ էլ էլաւ թարկ-դիւնեա արեց էլաւ կնաց խասաւ մէ մէշիմ մէջ (անտառ), էն մէշին ոչ ոռ կէր ոչ զյլօխ, էն կանդար անսախմանք շատ էր: Էյ՝ ասաց՝ մնամ ըստեղ, թօ գէյլէր, առջեր ձիկ ուտեն, ազմառեն: Կնաց տեսաւ էրկու խնձորի ալուկ (խըն-ձորի փոքր տունկ): Ճառան, քեանոնի ամիսն էր (գեկտ. յունաւը) խնձոր ին պահած, որ չուտես չխմես ինե իրիշկաս: Թախումմ կարմիր խնձոր ի մէկ սիթուակ. Տօ, ասաց, ախըր ես անօթի մեռայ, մէյ խատ կէրաւ, կոտոշմ էլաւ, կնաց մէ կողմ, մէկէլ կէրաւ, մէ-կէլ էլաւ՝ կնաց էն մէկէլ կողմ: Էյ, ասաց, էսա շատ աղէկ պան ի, մնամ ըստեղ թօ գէյլէր գեան ձի ուտեն, չկանամ փախնէ: Քիչմ մնաց ըստակնայ տեղն ու տեղ: Դօրիս ասաց՝ կայնի դէօր էնա սիզտակներաց ուտեն, հազիյ էլածն էլաւ՝ էլ ինչ տը էլնի ձիկ:

Զես իտու սիվտակ խնձորից առեց կէրաւ. մէկ կէրաւ կոտոշմ ինցեաւ, մէկէլ կէրաւ, մէկէլ ինցեաւ:

— Էյ, ասաց, իմ պան էլաւ. էլաւ էն խնձորներուց չանթիկմ լիլից, կնաց Դիւնեա-Դիւղեալու փէնջարի տակ նստաւ, փունց տանիս, կանչեց ոխնձոր կը ծախմած. հըմէն լսան էլան է-կան տեսան կարմիր կարմիր խնձորներ, որ չուտես չխմես հնե իրիշկաս:

Դիւնեա-Դիւղալին ասաց. էսա քեանոնին (գեկտեմբերին) էսա փքիւն, ձինին, էդա ինչ խնձոր ի կըծախեն:

Էկան ինոր ասին. Ոլլա սկզն խնձոր ի որ աշխար չկայ, կարմիր-սիվտակ:

Ե՛, ասաց, ինչիս կը ծախի:

Ասին. Կասի որ թօ Դիւնեա-Դիւզալին փէնճարից ուր գյլօխ խանի տիւս ես ինոր խնձոր տամ:

Էլաւ՝ իրիշկաց որ մարդ չկէր: Գյլօխ էխան տիւս, տղէն խնձորմ էթալ: Են առեց կերաւ՝ կուտոշմ էլաւ, կնաց քեօշքի էն մէկէլ ոտնից կախւաւ տակ: Մէկէլ իտու, ասաց. Առ կե, կըթափի:

Աղջիկ առեց կերաւ, խատմ էլ կուտոշ էլաւ. կնաց քեօշքի էն մէկէլ ոտքից կախվաւ տակ. ուր գյլօխ մնաց փէնժարից տիւս: Մկայ գեօր լաճուն ի:

Լաճն էլ տեսաւ Դիւնեա-Դիւզալի վիճակ ասաց. Դէ մկա ինչիս ես, Դիւնեա-Դիւզալի. էլ թնչ կանաւ անե ձիկ. չիւմ եմ ուրո-քիւլախին, իմ սիրոտ, իմ արձթէ թաս չիտաս, չըմ իսկե քեռ կուտոշներ: Աղջիկն էր դիրմ գեղ առեց խմաւ, փսխեց, սիրոտ էկաւ տակ ինքեաւ. լաճ համան առեց կերաւ: Սըռո-քիւլախին էլ, արձթէ թասն էլ իտու: Լաճ խատմ յետուանց շվիկմ ի զար վէր աղջկայ քեամկին ասաց. Թէյզնէ կուզեմ որ Դիւնեա-Դիւզալին սկոն խօրոտ մէ զախմ (պինտ ամուր) ջորիմ ըլնի, որ ես խեծնեմ կան գեամ:

Դիւնեա-Դիւզալին դառցաւ ջորիմ, որ աշխար չկէր: Դիրմ խէծաւ, մէյ մէկ վարոցմ էլ ի զար, էլան քեառոտւն էլ Դիւնեա-Դիւզալի. ինոր մաղազի դուռ էպաց, ինոր կանդար մալեր իպառց, քշեց կնաց ուր խօր մօր քեաղայք, ուր մալ էն տեղ ծախսեց:

Ե՞ն, ասաց, էխնեմ էրթամ իմ խօր, մօր տան զեխ (կողմ), խենյք իմ խէր ինչ կանի: Կնաց խասաւ տուն: Էն տեղ տեսաւ նէա ջորի, նէա մալ, էլմ էլ ուր խէր գեօ ջըւալ թալե քեամակ կէրթայ ցախէ: Խնոնց էթող էն տեղ: Ասաց. էրթամ իմ ախպէր կնդնեմ, նոր գեամ իմ խօր, մօր մօտ, առնեմ տանեմ մօտ իմ ախպէր: Էկաւ ախպէր կնտաւ, առեց ուր մալեր, ծախելէն ծախելէն էլմ էլ կնաց խօր քեաղայք: Տեսաւ ուր խօր տուն տեղ խարապա էլլած, իրենյք էլ չկան ու չկան. խարց ու փորձ արեց, ոչ վով սաւախս-սօլուխ չիտու. էթող կնաց. ճամբախ տեսաւ էրկու խալիւր, մէկ իրիկ, մէկ կնիկ կէրթէն, ասաց. Պարև ձե, խալիւրներ, դեմը կէրթէյք:

Այ Աստծու պարին քեյ, խօրօտ ջէէլ. կէրթանյք էսա քեաղայք ժողովք անելու (մուրալու), մե խաց ճարելու:

Տղէն ասաց. Ե՛ ինչի՞ դայիմ (միշտ) էտա քեռ չվան գեօ քեռ քամակն ի վեր կան կուզեաւ:

—Ասաց. Մեռնեմ քեյ. ապա թնչ անեյք, էսորով ցախ-մախ կը պիրեմ, կը ծախեմ, իմ ապրուստ կանենյք:

Խալիւր էսա որ կասէր, հմ հմ ուր պոկներ կըկծէր: Տղէն

ասաց. Դէ, պապիկ, առ էսա թաս տար յաղպիւր ջուր խմի, որ քեռ չվան տամ էլմէլ էրթաս ցախ կըես:

Պապիկ կնիկ էթող կնաց յաղպիւր ջուր խմելու. տղէն զարոցմ քեաշեց կնկա քամկին, կնիկ էլաւ բող էշմ որ սկի սկոն չէր էլի:

Պապիկ իրե ասաց. Ո՞ւր է իմ կնիկ:

Լաճ ասաց. Առ քեռ էշ. քեռ կնիկ կնաց հէտի հէտի (ուշիկ ուշիկ) ասաց. Թօ իմ էրիկ գեա ձիկ կնդնի, ոլլա ասաց՝ սկոն պառնաս էն էշ որ ինոր մէջաց կաշին թօնի: Պապիկ գնաց, թիւր ջարն էլ կնաց:

Խնաեղ թագաւոր խասկըցաւ որ էն լաճ ուր ախալէրն էր. իլաց՝ խասաւ ախալօր վիզ գրիկեց. միս, ասաց, տիւ իմ ախալէրն ես: Էրկու ախալէրն էլ էլան ուրենց խօփ ձեռներ պագեյցին. վարոցմ էլ իզար մօր քամկին, էլմ էլ էլաւ կնիկ, ոյ, ասաց խէր. տո էսա իմ կնիկն էր որ ես սկոմ ժամանակ կորսցուցեր ի: Խէր որ տեսաւ ուր տղէներ էդա վառք ու պատւին, շատ ուրախցաւ, էլաւ աշխրով. էլ չէր կանա ուր սիրտ պանե:

Լաճն էր կնաց իտև Դիւնեա-Դիւզալուն. ուր մալով թամալով իսպէ էնտեղ, ուր ախալօր մօտ. եօթն օր, եօթ գիշեր, զարկին խաղցին ուրախցան. խարսնիս արին պրծան: Խոռնյք խասան ուրենց սրտի մուրապին, տիւք էլ, մհնյք էլ խասնենք մեր սրտի մուրապին:

Պատմեց 1910 թուի օգոստոսի 21-ին Հայոց Զորի Քերծ գիւղի բնակիչ Մանուկ Սահակեան անգրագէտ զիւղացին:



ՃԱՄՃԱԿՈՎ ԷՐԵԱՅ

Ժամանակով էրկու աղբէր կը լինեն. Իսա, Միսա, էրկուսն էլ նախրորդ կը լինեն: Նախիր կը տանեն սար կարածան, պղտիկ աղբէր փարա կը կնտնի, ջոջ աղբէր ուրեն մտքի մէջ կասա. Խարեմ իմ աղբէր տանեմ ձորիմ մէջ ըսպանեմ, փարէն մօտէն առնեմ: Եփ օր կը տանի ձորի մէջ, մէկ ջօչ կօտմ (գանգ) կը տեսնայ, կասա. Երանի ես գիյտնէր խեմ դու ժամանակով ինչպէս մարդմ էր իրե, քանի տարի էր ապրե: Աստծու խրամանքով էտ կոտ լեզու կելնի, իտոր ջուապ կը տայ, կասի. Թէ ես ժամանակով մարդմ էլա սարեր, խինդ խարիր կնիկ բերի Դիւրջու մօտէն, խինդ խարիր կնիկ բերի Ռոմու մօտէն: Իսայի Նարին կասայ. Եղ խազար կնիկ ինչպէս կառցար գոհացուցիր:

Կասայ. Թէ չում օր կէրթէր հէվար (իրիկուան) ես հըմէն եաթախի մէջ իրեյք դիր կէրթէր ինչխ (ինչպէս) քեահնէլ ձին տէր թիմար, քաշէր դիւս մէյտան, թող ու դուման խանէր, Հեղմ էլ կը խարցուցի, կասի. Սաղ սսա թէ էղ խազար կնգտերուց քե ինչկանդար տղայ էր իւց: Կասայ. Զի կէր խինդ խարիր լաճ սիւտակ խանչլիներով, իտոնց խանչլի բուռ սաղափ: Զի կէր խինդ խարիր լաճ սև խալըմներով, իտոնց խանչլի բուռ նըշլիներով, էլմ կէր խինդ խարիր լաճ կարմիր խալըմներով, իտոնց խանչլի բուռ հըմէն մառջաններով, Եփ օր իրիկուն նէճրից կը գեն քէֆ ուրախութեն էնէլով:

Էտ մարդ էլմ էլ կը խարցուցայ ճըմճըմին, թէ քե աշխըրքիս վէրէն մալ ինչքան ա էլե: —Կասայ. Զի կէր քեառսուն խովիւ սարեր, քեառսուն էլ նախրորդ դաշտեր, քեառսուն էլ գութան, արաբա:

Նորէն կը խարցուցայ թէ աշխըրքի վէրէն էտքան մալ ա քե էլե, դու ինչկանդար խէր ես էրե աշխըրքի վէրէն:

—Ճըմճըմ կասա. Ես օրէն խինդ խարիր աղքատ կը խագուցէր, խինդ խարիր էլ անօթի կը կշտացուցէր, օրէն խինդ խարիր էլ զալմի վիզ կը զանէր:

—Կը խարցուցայ կասայ. Երանի ես գիյտնէր թէ դու քանի տարի ես ապրե աշխըրքի վէրէն:

—Ճըմճըմ կասայ. Ես խազար տարի աշխըրքի վէրէն

մեացի, ցաւ չըտիսայ, եփ որ իմ օր էկաւ, մէկ պաղ քըլտինքմ խոռու իմ վէրէն, եթմիշ խաղար խէցիթներ ժողվրվան չաբա չէրին, ձի դրին վըր էրկու փէտին, բերին դրին մընչ պաղ խողին, հալա իմ բէրան դառն ա մեռնելու օրից:

Իսս եփ էս լսաւ, խասկըցաւ օր աշխրքի բաներ սուս ա. մարդու վերջ բուռմ խողա, էլ ախօրօր արնքի տակ չը մտաւ:

Պատմեց 1911 թուի օգոստոսի 20-ին Նարեկ գիւղում Պետրոս Աւոյեան անգրագէտ գիւղացին, որ լաւ քրդերէն գիտէ և յանախ քրդերէն հէքիաթներ է ասում քրդաբնակ գիւղերում:

ՔԱՄՈՐԱՆՑ ՇՈՒՆ

Կնիկմ տղով կեղնի, իրիկ կէրթայ դաշտ կը պանի, էս մէկ իրիկուն իրիկ-կնիկ շատ խաղար կուտան, իրիկ կասի. Որ տիւ տղէն պիրես, լաճմ էլնի, ով որ ձիկ դաշտ անկնջկլայ տայ, ևս ինոր մէյ խատ ուռուպիա (արժէ Յ զուրուշ) ոսկիմ ինոր փեշքաշ տը տամ, էս մէկէլ օրն ի, կնիկ տղէմ կը պիրի, լաճ կեղնի, յինքն էլ կասի. Տօ էս ինչ ուրիշներն անկնջկլայ տանին իմ իրկան, չխօս ևս կէրթամ, կասեմ, ուռուպիէն կառնեմ ձիկ. համան կէլնի, տղէն կը փաթթի մէջ ուրուրոցին, դիւռ կը մոռնայ անփակել, ափալ-թափալ կը վազի դաշտ իրկան կը կանչի. Ծո մարդ, տղէն պիրի, լաճ ի լաճ, Կնիկ դէլ (տակաւին) իրկան չը խասած, իրիկ կասի. Կնիկ, Աստծու անկնջկլէն քե ըլնի, դառցի գնա տուն, չտմ ևս իրիկուն դամ քեռյ անկնջկլէն մէյ խատ ուռուպիա ոսկի կուտամ:

Կնիկ կը դառնայ կուգայ, կը տեսնայ, որ ինչ, քաւորանց շուն պէրան արնոտ, լըկսթէլէն տնէն կէլնի դուս. կնիկ կէրթայ կիրիշկի մէջ ուրուրոցին, կը տեսնայ որ զա (ոչինչ) չկայ, քաւորանց շուն տղէն կիրեր էր, ոսկաներ թողիր էր զա, ինչ սանամէրն էկաւ, քաւորանց շուն ամչցաւ, պէրան լըկսթելէն տնից էկաւ դուս: Սանամէրն էլ ասաց. վախէնամ յուշունց տամ քաւոր-կնիկան խաթըն էլ մնայ ձկնէ, յուշիկմ ասաց.

Հայ կոռապոչ, տուտուզա մոռւթ,

Փուլզց փուլզոց կան գեացող,

Փուլզի նստող, ուսկոփ կռծող:

Կը մնայ շում իրիկուն մարդ դաշտէն կուգա տուն, կասի. Կնիկ մւր ի տղէն, Կնիկ կասի. Քեա մարդ, մեր տղէն քաւորանց շուն կիրեր էր, չում ևս դաշտից էկաւ, պէրան սրբելէն էկաւ դուս:

Մարգ կասի. Սո կնիկ, ապա դու պան չասթը: Կնիկ կասի. Սո
մարգ, ապա չասի, վախէնամ քաւոր կնկան խաթրն էլ մնայ, ան-
չամ ասի.

Կոռապոչ, տուտուզա մռութ,
Փուղցէ փուղոց կան գեացող,
Ուսկոփ կոծող, փուղցի նստող:
Իրիկն էլ կասի. Թեա կնիկ, մռւշ (լուռ) կաց, քաւոր կին չը
լսի՝ ամօթ ի. թէ որ լաւ խաթր շատ կը մնայ:

